

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԸ ՄԻԶԱԳԵՏՔ ԱՔՍՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

*Բարձրում հրատարակված «Գործ» ամսագրի 1917 թ. 2-րդ և 3-րդ համարներում տպագրվել է գրող, թարգմանիչ, հրապարակագիր Զապել Եսայանի (1878–1943) «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» վերնագրով նյութը: Պատմություն, որը նա լսել ու գրի է առել դեպի Միջագետքի անապատներ արքայական հայ ժողովրդի մի ստվար հատվածի ողբերգության ականատեսված Հայկ Թորոյանից: Գիտական հանրությանն անձանոթ այդ նյութը, թերևս, եթե ոչ ամենատաաջին, ապա այդ մասին եղած առաջին վկայություններից է: Եսայանի փաստավավերական արժեք ունեցող «արձանագրությունները» փաստում են Միջագետքի անապատներում տեղի ունեցած եղերական իրադարձությունները վերապրածների և այլազգի բազմաթիվ ականատեսների՝ հետագայում հաղորդած տեղեկությունները, նկարագրությունները, կոտորածներին վերաբերող մանրամասները:*

*Ստորև այդ ծավալուն նյութից հրապարակում ենք մի հատված:*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՀՈԳԵՎԱՐՔԸ  
(Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)

*Տաժանելի պարտաւորութիւնը վիճակուեցաւ ինձ գրի առնելու այն պատկերները ու տպաւորութիւնները, գորս տեսած ու կրած էր Միջագետքի մէջ մահացող հայ ժողովրդին միակ ականատեսս վկան, պարոն Հայկ Թորոյեան: Միակ հայ մը, որ իր աշայրջութեան և հաստատակամութեան շնորհիւ, անցնելով արքորի այդ դժնդակ ճամբաներէն, հասած է մեզի վկայելու և աւանդելու այն հեծեծանքը, որ մենեւէ առաջ ամբողջ ժողովուրդ մը արձակած է Միջագետքի անապատներէն:*

*Դիպուածի արդիւնք չէ, կամ սովորական առաքինութիւններ և յատկութիւններ բաւական չէին, որ այդ միակ հայը կարենար իր դերը կատարել. անիկա զգացած է, որ սրբազան պարտք մը ունի և այդ զգացումով տոգորուած՝ մօտիկցած է բոլոր ցան ու ցրի խումբերուն, լսած է տառապանքի բոլոր ձայները, տեսած է զարհու-*

րելին բոլոր անպատմելի պատկերներուն, և անցնելով հայու մը համար անան-  
ցանելի թրքական սահմանէն, հասած է մեզի, բերելով իր հետ վերջին աղաղակը  
անպատմելի արհաւիրքներուն մէջ չքացող ժողովուրդի մը:

Դժուար էր այսպիսի սարսափելի նիւթի մը մօտենալ, դժուար էր ապրել  
մտքով այն հոգեվարքի ժամերը, որ խուռներամ բազմութիւններ հաւաքապէս  
ապրեր են, ենթարկուելով անգութ և ռիսերիմ դահիճներու ծիծաղին, հայհոյանք-  
ներուն և ամեն կարգի անարգանքներուն:

Ցաւագինօրէն տոգորուած ինձ բաժին ինկած պարտաւորութիւնով, սրբապղ-  
ծութիւն համարեցի գրականութեան նիւթ դարձնել ամբողջ ժողովուրդի մը օրհա-  
սական տառապանքը, պղծուած մաքուր աղջիկներու, ցաւէ և թշուառութենէ ա-  
նասնացած քաղաքակիրթ ազգի մը բեկորներու, գետին եզերքը վազող ջուրին  
նայելով ծարաւէ մեռնող բազմութիւններու, դիակներու դեզերու մէջ տակաւին  
ապրող ուրուականներու, մարտիրոսացած մանուկներու, անարժէք իրերու  
նման առուծախի նիւթ դարձող դաստիարակուած օրիորդներու և տիկիներու,  
մայրական զգացումին մէջ չարաչար վիրաւորուած կիներու անպատմելի պատ-  
մութիւնը, և մօտեցայ այս գործին ամենամեծ պարզութեամբ և ակնածանքով:

Բնչ որ հայ կամ օտար ընթերցողը պիտի գտնէ այս արձանագրութեանց մէջ,  
գեր ի վեր կը մնայ ամենէն դժոխային երևակայութենէ: Հաստատ կերպով կարելի  
է ըսել. պատերազմի այս տիեզերական սարսափներուն մէջ, երբ աշխարհիս գրե-  
թէ ամեն կողմերը մարդոց զգացումները բթացած են ամենօրեայ դժբախտութիւն-  
ներու առթած ցնցումներէն, հայ ժողովուրդի տառապանքը այսու ամենայնիւ  
հանգամանքը ունի զարմացնելու համայն մարդկութիւնը և սոսկումով ու զար-  
հուրանքով դղրդելու անոր խղճմտանքը:

Միայն թիւրքը կարող էր այդ առաջնութիւնը վայելել մեր ժամանակի արիւ-  
նտ տարիներուն մէջ, որովհետև ոճիրը միակ բանն է, որուն մէջ անմրցելի կա-  
րող էր մնալ անիկա: Ոճիրը իր բոլոր քստմնելի կատարելութիւններով և դիւային  
նրբութիւններով միակ մշակուած ու կատարելագործուած ընդունակութիւնն է,  
որ այդ չարաբաստիկ ցեղը կուտայ իբր պտուղ, իբր արդիւնք իր ազգային ոգիին:

Մարդկային ամենախիստ արդարութեան չափերով իսկ չէ կարելի դատել ու  
նոյն իսկ մերձենալ այն չարագործութիւններուն, որոնց ենթարկած են անմեղ և  
անպաշտպան բնակչութիւն մը, բայց միևնոյն ստեն համոզուած եմ, որ ահագ-  
նութիւնն ու անհաւանականութիւնն իսկ այդ ոճրագործութեանց անպատիժ պի-  
տի թողուն զիրենք:

Կանցնին տարիներ, կը մոռացուին քաղաքական ռիսերը և աստելութիւնները,  
նոր մարդկութիւնը նոր յոյսերով և նոր ձգտումներով կը մոռնայ այսօրուան սու-  
գը և թշուառութիւնը, բայց բան մը պիտի մնայ անդարմանելի և անմոռանալի,

այն է՝ ամբողջ ժողովուրդի մը երկարաձգուած և տանջալի հոգեվարքը, որուն անշուշտ մէկ դժգոյն պատկերը պիտի գտնէք յետագայ էջերուն մէջ:

—————

*Տիգրանակերտ. 1914 նոյեմբեր ամիսը. Տնտեսական պոյքոթ.  
Շուկային հրդեհումը. Զինուորական գրաւումներ և զինուորակոչ:*

—————

1914 նոյեմբեր ամսուն կը գտնուէի Տիգրանակերտ հնութիւններ գնելու գործով): Ահա թէ ի՞նչ վիճակ կը ներկայացնէր քաղաքը վերջին աղէտներէն առաջ: Տիգրանակերտի բնակչութեան կէտը հայ է և միւս կէտը կազմուած է թիւրքերէ և քիւրդերէ: Հայերու մէջ կան նաև փոքր թուով ասորիներ, որոնք հայախօս են, ինչպէս քիւրդերու և թիւրքերու մէկ մասը: Հայերը ունին չորս ազգային դպրոց, երկու եկեղեցի և առաջնորդարան: Քաղաքի հայերը կը զբաղին վաճառականութեամբ և արհեստներով: Տիգրանակերտ գլխաւոր շուկան դարձած է հիւսիսարևելեան նահանգներու, որոնց ապրանքները կը կենտրոնանան այստեղ, ուրկէ կարտածուին գլխաւորապէս ցորեն, իւղ, ոչխար, բուրդ, խէժ, մետաքս ու մետաքսեղէն: Տիգրանակերտի մէջ հայերը ունէին մետաքսեղէն կերպասներու, ալիւրի, սիկառի թուղթի բազմաթիւ գործարաններ, ջրաբաշխ և տպարաններ: Մէկ ալիւրի գործարան միայն կը պատկանէր Տիգրանակերտի թիւրք երեսփոխանին:

Սահմանադրութեան հռչակումէն ետքը Տիգրանակերտի հայ գիւղերն ալ ունեցան մեծ բարգաւաճում: Այն հողերը և գիւղերը, որ հայերը կորսնցուցած էին բռնապետական ռեժիմին, կրկին գնեցին և բերել տալով երկրագործական մեքենաներ, ինչպէս նաև հետեւելով երկրագործական նոր մեթոդներու, արագ կերպով սկսան հարստանալ: Թիւրք հարուստ համարուած գիւղացիք իսկ, բայց մասնաւոր քիւրդերը, որոնք իսլամ բնակչութեան ստուար մեծամասնութիւնը կը կազմեն, դարձան հայերու ծառաները: Դրամագլուխը և ազդեցութիւնը կենտրոնացած ըլլալով հայերու մօտ, կապալի գործն ալ կը գտնուէր իրենց ձեռքը:

Տնտեսական այս բարգաւաճման հետ մեծ յառաջադիմութիւն տեղի ունեցաւ Տիգրանակերտի հայերու մտաւոր կեանքին մէջ: Հիմնուեցան գրադարաններ, թատրոն և կազմուեցաւ երաժշտախումբ մը: Ինչպէս ամեն հայաբնակ վայրերու մէջ, այստեղ ևս մեծ եռանդով և շտապով հայ ժողովուրդը փարեցաւ իր վերածնունդի գործին և յառաջ բերաւ այնպիսի հասարակական եռուն կեանք մը, որ բազմապատիկ կերպով հեռու էր և տարբեր տիրապետող ցեղին յետամնաց և դանդաղ կենցաղէն: Հայերու գերազանցութիւնը ազատ և անկաշկանդ ռեժիմի ներքն այնքան ակնյայտնի կերպով երևցաւ, որ իսլամ բնակչութիւնը կամայ թէ

ակամայ ենթարկուեցաւ այդ գերազանցութեան: Օրինակի համար, երբ վեճ ծագեր հայ և թիւրք կամ քիւրդ գիւղացիներու մէջ, երկու կողմն ալ սիրայօժար կը դիմէին հայերէ կազմուած ատեաններու, որոնք արդարութեամբ և անկողմնապահութեամբ վեճը կը լուծէին և հաշտարար դեր կը կատարէին յաճախ: Երբեմն իսլամներ կը դիմէին այդ ատեաններուն, նոյն իսկ երբ վեճը իրենց միջև էր, զգուած թիւրքական դատարաններու դանդաղութենէն և կաշատակերութենէն:

Իրաց այս դրութեան մէջ անհնար էր, որ թիւրք ժողովուրդը մրցէր հայերու յարաճուն յառաջադիմութեան դէմ. իթտիհատականները մասնաւորապէս մտահոգ էին և շատ լաւ գիտնալով, թէ իրենց անդամալոյժ ժողովուրդը շարժման մէջ դնել գրեթէ անհնար է, սկսան ուղղակի կառավարական միջոցներու դիմել հակակշռելու համար հայերու ազդեցութեան: Պայքարը սկսաւ տնտեսական հողի վրայ. օգուտ քաղելով քրիստոնէականներու դէմ տնտեսական պոյքոթէն, որ հոչակուած էր պալքանեան պատերազմի առիթով, սկսան գրգռութիւն յառաջ բերել իսլամ բնակչութեան մէջ և միննոյն ժամանակ հիմնեցին Մաղազայի իսլամիէ անունով վաճառատուն մը, ուր կը ծախուէին ամեն տեսակի ապրանքներ: Թէ՛ յայտնապէս և թէ՛ ծածուկ կը յորդորէին իսլամները ամեն կարգի յարաբերութիւն խզել հայերու հետ և գնել միմիայն իսլամներէ և մասնաւորաբար իթտիհատականներու հիմնած այդ վաճառատունէն: Կառավարութեան միջնորդութեամբ վարկեր բացին թիւրք հողատէրերուն, և երկրագործական պանքան առանձնապէս իր միջոցները տրամադրեց իսլամ գիւղացիութեան: Հայերը կը զգային այս տենդոս գործունէութեան իմաստը, բայց անվրդով կը մնային: Շուկան իրենց ձեռքն էր և իրենք խաղաղ կերպով կը մրցէին, որովհետև իրենց ունեցած եւրոպական ապրանքները, անոնց բազմազանութիւնը, տեսակի լաւութիւնը և նոյն իսկ աժանութիւնը բաւական էին յաճախորդները պահելու: Մաղազայի իսլամիէն լճացած մնաց և գրգռութիւնները անզօր եղան լուրջ վնաս հասցնելու հայերու տնտեսութեան: Իթտիհատական կառավարութիւնը նոր առիթներ կը փնտռէր հայոց շուկան փչացնելու և այդ նպատակաւ իսկ կը հրատարակէն տեղական թերթ մը, որուն սակայն գրաշարները և տպարանի գործաւորները ստիպուած էին հայերէ առնել:

Երբ այս դրութիւնը աչքի առաջ ունենանք, շատ պարզ է մտածել, թէ զինուորական հրամանը և զինուորական գրաւումները ինչ սքանչելի առիթ մը ընծայեցին կառավարութեան օրինական ձևի տակ կողոպտելու հայերը: Իթտիհատականներու նախագահ Մէմդուհ պէյ և զինուորական մը անձամբ կատարեցին գրաւումները: Անոնք շուկայի մէջ կը մտնէին հայ վաճառատուները և գրեթէ բացարձակ և անխնայ թալանի կենթարկէին: Գրաւեցին ամեն տեսակ ապրանքներ. նոյն իսկ այնպիսի ապրանքներ, որոնք ունէ կերպով չեն կարող ծառայել զինուորական պիտոյքներու: Գրաւուած ասուեղէնէն զինուորականները հայ դերձակ-

ներու միջոցաւ, որոնք ձրի կաշխատօրնէին իբր զինուոր, շինել տուած են հագուստներ իրենց կանանց ու երեխայոց համար:

Նոյն տեսակ կեդեքումներու ենթարկուեցան նաև Տիգրանակերտի հայ գիւղերը: Գրաւեցին գրեթէ ամբողջապէս ապրանք, պաշար, սայլ և ամեն տեսակ կենդանիներ:

Երբ ամեն ինչ գրաւուեցաւ զինուորական պիտոյքներու պատրուակաւ, նոյեմբեր ամսոյ մէջ կէս զիշերին, իթտիհատական ոստիկաններու և զիշերապահներու ձեռամբ հրդեհեցին հայոց շուկան: Մէկ կողմէն հայոց շուկան կից էր թիւրքաց շուկային և թաղերուն, բայց երբ հրդեհը մինչև այդտեղ հասաւ, թիւրք կառավարութիւնը ամեն միջոց գործածելով, հրդեհին առաջքը կտրեց:

Հրդեհէն օր մը առաջ կառավարութիւնը քաղաքին մէջ համախմբեց շրջակայ գիւղերէն 4 – 5000 քիւրդեր զինուորութեան պատրուակին ներքև. հրդեհէն օր մը ետքը արձակեց զիրենք: Յայտնի էր, որ այդ բոլորը կազմակերպած էին առաջուց եթէ հայերը ոնէ լուրջ միջոցի դիմէին հրդեհը մարելու և դիմադրէին կառավարութեան արգելքներուն, այդ քիւրդերը պիտի արձակէին հայերու վրայ, որպէսզի կոտորէին և թալլէին:

Բնչպէս ըսինք, հրդեհի միջոցին կառավարութիւնը իր բոլոր միջոցները կը գործածէր, որ հայերը չի կարենային հրդեհը մարել և ազատել իրենց ապրանքները: Թոյլ չէին տար ոչ ոքի մօտենալ աղէտին վայրը. ոստիկաններ և ժանտարմաներ պաշարած էին շուկան, և նոյն իսկ ձևի համար ոնէ օգնութիւն չէր կատարուեր: Հրդեհը հետզհետէ կը ծաւալէր և հայ ժողովուրդը կը վախնար, որ անիկա պիտի հասներ մինչև հայ թաղերը, ու եկեղեցին ալ վտանգի մէջ էր: Բոլոր երիտասարդները բացակայ էին, որովհետև զինուորութեան կանչուած էին: Բայց մաս մը ժողովուրդ, որու մէջ կային նաև կիներ ու աղջիկներ, մեծ թափով սկսան աշխատիլ փրկելու համար թաղերը և եկեղեցին: Այդ նպատակաւ կաշխատէին փլցնել Մարտիրոս Աթարեանի մետաքսի գործարանը: Իսկ թիւրք զինուորականները փոխանակ հրշէջ մեքենաներ բերել տալու և օգնելու, արգելք կըլլային ու կը ծաղրէին հայերը:

– Կը բաւէ, ի՞նչ կընէք, կըսէին, ի՞նչ կա որ մեզ այսպէս փռշիի մէջ խեղդեցիք:

Այս հրդեհին այրեցան 1143 խանութներ, որոնց մէջ կային 7 փուռ, 3 քարաւանսերայ և քանի մը սրճարաններ: Հայերու նիւթական կորուստը շատ մեծ էր: Գաղափար մը տալու համար կարելի է յիշել սա բանը, որ այս հրդեհէն վտանգուած էր 500,000 ոսկի, որ հալէպցիները իբր վարկ տուած էին տիգրանակերտիցի հայերու: Հայ վաճառականութիւնը մէկ անգամէն սնանկացաւ գրեթէ, մանաւանդ որ ոչ միայն վերականգնելու ոնէ հնարք չի կար, այլ ընդհակառակը կառավարութիւնն ամեն հնարք ի գործ կը դնէր լրացնելու համար հայերու տնտեսական քայքայումը:

Ձինուորակոչի պատճառաւ քաղաքային դատարանները փակ էին, և երբ թիւրք և քիւրդ պարտատէրները մերժեցին իրենց պարտքերը վճարել հայերուն, այս վերջինները ունէ միջոց չունէին իրենց իրաւունքը յարգել տալու:

Հրդեհէն անմիջապէս ետքը մինչև 45 տարեկանները զէնքի տակ կանչուեցան և երեք օր պայմանաժամ տրուեցաւ: Հայերը սկսան շտապով ծախել կամ գրաւի դնել իրենց տունները, տրամադրել իրենց զարդեղէնները, որպէսզի պէտէլը վճարեն և փրկուին զինուորական ծառայութենէն, որը զանազան պատճառներով վերին աստիճանի անապահով և վտանգաւոր վիճակ մը կը համարէին մասնաւորաբար հայերու համար, և այս յուսահատական միջոցներով զինուորացուներու մէկ, մեծ մասը փրկուեցան: Բայց հայերու բոլոր ապրանքներուն յարգը և գինը ինկած էր: Կառավարութիւնը չէր ընդունէր 5 ոսկինոցները, որ իբր զարդ կը գործածին կանայք, և խեղճերը ստիպուած էին ծախելու թիւրք ժողովուրդին, որ կը գներ երեք և կէս ոսկիի փոխարէն: Մետաքսը կը ծախուէր 100-ին 50 զեղջով, իսկ 5 – 6 սենեակով տուն մը՝ 60 – 70 ոսկիի:

Կառավարութիւնը այս կերպերով հայ ժողովուրդին բոլոր ուժերը քամելէ ետքը յայտարարեց, որ ամեն տուն պարտական էր տալ պղնձեղէն ամաններ, վրաններ, անկողիններ և այլն զինուորներու համար: Ով որ ունէր կըշտապէր տալու, որովհետև զինուորական իշխանութիւնը ամեն կարգի բռնութիւն կը գործածէր: Խուզարկելու պատրուակաւ ժանտարմաները կը մտնէին տունները, կորոնէին, կը կողոպտէին: Կը վերցնէին ինչ որ գտնէին՝ պաշար, ուտեստեղէն, պղնձեղէն, և վրաններու տեղ կը տանէին մեծարժէք գորգեր և կապերտներ:

Շուկային հրդեհումէն քիչ ետքը ուզեցին կրակի տալ նաև հայ թաղերը, բայց թիւրք հրձիգները բռնուեցան հայ գիշերապահներու կողմէ, և այդպէսով վտանգին առաջը առնուեցաւ:

Կառավարական ճնշումը հետզհետէ դարձաւ անտանելի, նիւթական և բարոյական հարուածները կիջնային հայ ժողովրդին վրայ առանց միջոցի: Զէնք փնտրելու պատրուակաւ կառավարութիւնը 150 – 200 քիւրդ, թիւրք խուժանի մը աշխատակցութեամբ խուզարկեց եկեղեցին: Ամեն տեսակ պատրուակ կը փնտրէին թալլելու և կոտորելու համար. բայց իրենց խուզարկութիւնը արդիւնք չունեցաւ, և ունէ զէնք չի գտնալով եկեղեցիին մէջ, երբ ձեռնունայն կը վերադառնային, ճամբուն վրայ հանդիպեցան ծերունի քահանային և ամեն մէկը հարուած իջեցնելով խեղճին գլխուն, ծեծի տակ սպաննեցին զինքը:

Նոյն միջոցին կախադան բարձրացան Արգնի, Մատենի օսմանեան բարլամենթի հայ անդամ Չրաճեան Ստեփան էֆէնդին և իր երկու որդիները, որոնք նոյնպէս կառավարական պաշտօնեաներ էին, այն միակ պատճառաւ, որ այդ ընտանիքը հնչակեան կը համարուէր:

Կառավարության թշնամական դիրքը տեսնելով, բնական է, որ հայ զինուորացուներեն շատերը չէին ներկայանար հրաւերին: Բայց փախստականին փոխարեն թիրաքերը կը բանտարկէին հայրը, մայրը կամ քոյրը, մինչն որ զինուորացուն կը յայտնուէր ընտանիքը փրկելու համար:

Նոյեմբեր ամսոյ մէջ տեղի ունեցած էր նաև Պէրէճիքի<sup>(6)</sup> հրդեհը. այնտեղ ալ շուկան այրած էր և 70 խանութներ, ինչպէս շատ տուներ, փճացեր էին: Նմանօրինակ դէպքեր ու լուրեր, որ կը հասնէին զանազան հայաբնակ վայրերէ, այլևս տարակոյս չէին թողուլ թիրաքերու դէպի հայերը ունեցած դիտաւորութիւններու մասին, և ծանր մտահոգութիւն մը պաշարած էր բոլոր միտքերը:

Իմ մեկնելէս քիչ առաջ Պանք Օթոմանը Տիգրանակերտի, Հալէպի, Պիթլիսի և գրեթէ իր բոլոր մասնաճիւղերուն մէջ յայտարարեց, որ ամեն անոնք, որ պարտք ունին պանքին, պէտք է որ որոշեալ պայմանաժամով վճարեն: Հակառակ պարագային տեղի կունենայ անշարժ ինչքերու գրաւում և սնանկ կը հռչակուի պարտատէրը: Իսկ անոնք, որ պանքան դրամ պահ տուած էին, ունէ կերպով չէին կարող գանձել: Այս անարդար կարգադրութիւնը պատճառ եղաւ, որ շատ մը հայեր սնանկ հռչակուին և ենթարկուին այդ վիճակին յատուկ բոլոր չարիքներուն:

Հայ ժողովուրդը շատ լաւ գիտէր, թէ մինչն որ աստիճանները կրնայ հասնիլ թիրաքերու աստելութիւնը, հակառակ որ բարձրաստիճան պաշտօնեաները զանազան խորամանկ ձևերով և խօսքերով կուզէին ծածկել իրենց դիտաւորութիւնները: Ինչպէս ամեն տեղ, այնպէս ալ Տիգրանակերտի մէջ, թշնամին վարուեցաւ ճարպիկութիւնով: Աստիճանաբար ճնշելով և մաս-մաս կորզելով հայ ժողովուրդին նիւթական և բարոյական ուժերը, զայն ենթարկեց վերջնական բնաջնջման, երբ դիմադրութեան ունէ հաւանականութիւն այլևս չէր մնացած: Տիգրանակերտցի հայերը բաւական զէնք ունէին, բայց չէին համարձակեր բռնոն միջոցներու դիմել, որովհետև իրենց ամենէն ամուր բազուկները բացակայ էին, զինուորութեան գացած ըլլալով: Ժողովուրդէն մաս մը կառաջարկէր զէնքի ուժով դիմադրել և ապաստանիլ Սասունի լեռները, բայց երիտասարդներու բացակայութիւնը, կազմակերպութեան պակասը, ունէ բան մը կամ ժողովուրդէն գոնէ մաս մը փրկելու յոյսը խոհեմ և մտահոգ կը դարձնէին մեծամասնութիւնը, մինչ ձերերը յուսահատական ջանքեր կրնէին սիրաշահելու համար կառավարութիւնը:

Բոլոր յոյսերը ի դերն էլան և բոլոր խոհեմութիւնները ապարդիւն մնացին: Թիրաք կառավարութիւնը հանգիստ ժամանակ ունեցաւ իրագործելու իր ծրագիրը և վերջ ի վերջոյ Տիգրանակերտի հայ ժողովուրդը ենթարկուեցաւ տեղահանութեան և բնաջնջման:

*Ճալապլուզ. 1914 դեկտ. 1915 նոյեմբ. 12. Հայերու կացութիւնը մինչև 1915 փետրուար. Առաջին թշնամական նշանները. 2000 հայ բանուորներ կոտորելու փորձը. Փայտահաններու դէպքը:*

1914 նոյեմբերի վերջերը մեկնեցայ Տիգրանակերտէն, անցայ հարաւ-արևմուտ, Սներեկէն, ուր զինուորակոչը և զինուորական գրաւումները կատարուած էին հայերու մէջ այն անարդարութեամբ և անզօրութեամբ, ինչպէս Տիգրանակերտ: Հակառակ որ տեղւոյն բոլոր բժիշկները հայեր էին և անոնք ամենքն ալ առանց տարիքի սահմանումի պատասխանելով կատարութեան հրամանին, մեծ եռանդով և անխոնջ կերպով կաշխատէին բանակին մէջ, նոյն այդ իշխանութիւնը անհամար չարիքներով կը ճնշէր ոչ միայն հայ ժողովուրդը ընդհանրապէս, այլ նաև այդ բժիշկներուն ընտանիքները: Մտայլ և յուսահատական տխրութիւն մը գրաւած էր բոլորը, և արդէն իսկ կը զգային, թէ ի՛նչ սարսափելի վախճան կըսպասէր իրենց:

Սներեկէն անցայ Եդեսիա (Ուրֆա), ուր կացութիւնը աւելի մեղմ էր այդ ժամանակ: Շտապեցի անցնիլ Ճալապլուզ, և Տիգրանակերտէն մինչև Արաբ-բունար 4 օր կառքով և անկէ 2 ժամ գնացքով ճամբորդելէ ետքը՝ 5 օրէն հասայ Ճալապլուզ:

Ճալապլուզ Հալէպէն 100 քիլոմէթր հեռու Եփրատի եզերքին գիւղաքաղաք մըն է, որ կարևոր կայարաններէն մէկը դարձած է Պաղտատի երկաթուղիին: Բոլորովին արաբական է այս շրջանը և հայերը աննշան փոքրամասնութիւն մը կը կազմեն. թիւրքեր ալ քիչ կան, այնպէս որ հայերու վիճակը բավական հանդարտ է: Նոյնիսկ ամենադառն օրերուն այստեղ կացութիւնը համեմատաբար տանելի էր: Այն միջոցին, որ ես հասայ, արաբները և թիւրքերը լաւ վերաբերմունք ցոյց կը տային հայերու և տարտամօրէն խօսելով ուրիշ վայրերու մէջ պատահած դէպքերուն վրայ, կը բողոքէին և կը զարմանային:

– Մի՛ թէ մենք եղբայրներ չենք, նոյն հայրենիքի զաւակները, կըսէին:

Զինուորակոչը և զինուորական գրաւումները տեղի ունեցած էին օրէնքի սահմաններու մէջ, այնպէս որ այս կողմերու հայերու վիճակը նոյնիսկ չէր կարելի բաղդատել Տիգրանակերտի շրջանին հետ: Կառավարական պաշտօնեաներու մէջ հայեր կային և գրաւուած ապրանքները կը յանձնէին հայ պաշտօնեայի մը: Թէն բոլոր ոչ իսլամ վարժարանները գրաւեցին զինուորներու համար, բացառապէս ազատ թողուցին հայոց վարժարանը: Այս համեմատաբար լաւ վիճակը տուեց մինչև 1915-ի փետրուար ամիսը:

Իմ մէկ թիւրք բարեկամն, որուն հետ մտերմական յարաբերութիւններ ունէի, Հալէպ գացած էր. վերադարձաւ այդ միջոցին և ես գացի իրեն այցելութեան:

– Բարի ես եկեր, ըսի ուրախութեամբ:

Անիկա տխուր և խոժոռ դեմքով կը նայեր ինձի և ունէ բարեկամական ցոյց չէր ըներ, իբր թէ բոլորովին օտար մէկը ըլլայի:

– Բարի ես եկեր, կրկնեցի, շփոթուած իր ձևէն:

– Չէ՛, քու բարևդ քեզի, պատասխանեց չոր կերպով, այլ ևս մեր միջև բարեկամութիւն չի կայ, ամեն ինչ մեր մէջ խզուած է:

– Ինչո՞ւ, հարցուցի:

– Առ այժմ չեմ կրնար ըսել, օր մը կիմանաս...

Այդ օրերուն դիտեցիմք, որ տեսակ մը գրգռութիւն կայ թիւրքերու մէջ. ասոնք սրճարանները հաւաքուած ցած ձայնով կը խոսէին և երբ հայ մը երևար, կը լռէին: Տարօրինակ լուրեր կը թափառէին շրթունքէ շրթունք հայոց ապստամբութեան, թիւրք կիներու և երեխաներու կրած նախատիներու և չարչարանքներու մասին: Տարակոյս չի կար մեզի համար, որ մասնաւոր դիտաւորութեամբ և որոշ կազմակերպութեամբ գրգռութիւն յառաջ կը բերէին իսլամ ժողովուրդին մէջ հայերու դէմ:

1915-ի փետրուարի առաջին օրերուն, երբ այս աննպաստ շշուկները կը տարածուէին մեր շրջանի իսլամ բնակչութեան մէջ, հայ բանուորներու բազմութիւն մը կիսամեռ, սարսափահար, գրեթէ մերկ թափուեցան Ճալապլուզ և պատմելով իրենց գլխուն եկածները, օգնութիւն աղերսեցին տեղացի հայերէն:

Ահա թէ ինչ պատահած էր:

Ռասուլ Էյնի և Մծբինի միջև գերմանական արհեստանոց մը կայ, ուր 2000-ի չափ հայ բանուորներ կաշխատին երկաթուղիի շինութեանց վերաբերեալ գործերով: Արհեստանոցին պաշտպանութեան յատկացուած զինուորականը իր ժանտարմաներով կը հաւաքէ շրջակայքի չեչենները և չերքեզները և խուժելով արհեստանոցին վրայ, կը հարկադրէ հայ բանուորները, որ ամեն ինչ թողուն և հետևին իրենց: Խիստ հսկողութեան տակ զիրենք կը տանեն մօտակայ չերքեզ գիւղ մը, ուր կենթարկեն բացարձակ կողոպուտի: Կառնեն իրենց վրայէն ինչ որ կը գտնան և նոյն իսկ իրենց հագուստները: Ոմանք կը մնան միայն շապիկով, իսկ շատերը բոլորովին մերկացած են: Այս բոլորը կատարելէ ետքը 5 - ական հոգինոց խումբեր կը կազմեն և առաջին խումբը ճամբայ հանելով, կը տանեն մերձակայ բլուր մը, ուր մահուան դատապարտեալները սոսկումով կը տեսնեն, թէ արդէն իսկ մեծ փոս մը պատրաստուած է իրենց համար բլուրին ստորոտը: Այդտեղ կսկսեն մէկ մէկ դաշունահար ընել հայ բանուորները. երրորդը սպաննած էին արդէն, երբ անսպասելի կերպով ազատարարներ վրայ կը հասնին և կը խանգարեն ոճրագործները:

Ռասուլ Էյնի երկրաչափները և պատասխանատու պաշտօնեաները, որոնք յոյներ, իտալացիներ և հայեր էին, լսելով թե՛ չեչեններու և չերքեզներու խուժան մը բռնութեամբ տարած են իրենց բանուորները, կը դիմեն տեղւոյն գայմագամն, որ քնած էր, և զինքը արթնցնելէ ետքը կը բացատրեն, թէ ինչ ծանր պատասխանատուութեան կենթարկուի, եթէ երկաթուղիի բանուորները կոտորուին. և վերջապէս կը հարկադրեն զինքը, որ ոչ միայն շուտափոյթ օգնութիւն հասցնէ, այլ ինքն անձամբ ընկերանայ իրենց՝ որոնելու համար գոհերը: Այսպէսով կը հասնին կոտորածի վայրը և կազատեն մնացեալը գրեթէ մերկ վիճակի մէջ թիւրք զինուորականի ձեռքէն: Երբ գայմագամը զինուորականին կը հարցնէ, թէ ինչո՞ւ այսպիսի անգութ և յիմար գործի ձեռնարկած է, անիկա ի պատասխան ցոյց կուտայ իրեն եկած հեռագրական հրամանը:

Հայ բանուորները սակայն իրենց ազատարարներուն հետ կը վերադառնան արհեստանոց, որուն շուրջը ունէին իրենց հիւղակները և վրանները: Կը մտադրեն իրենց ունեցածները առնել և Հալէպ փախիլ, բայց անմիջապէս կը հաստատեն, թէ ամեն ինչ բացարձակապէս թալանուած է արդէն:

Պատերազմի պատճառաւ գերմանական երկաթուղիի հանքածուխը սպառուած էր և ստիպուած էին փայտ վառել մեքենաները բանեցնելու համար: Հայու մը ղեկավարութեամբ խումբ մը հայեր և շատ մը քիւրդ և թիւրք գործաւորներ պաշտօն ստանձնած էին անհրաժեշտ փայտը հայթայթելու: Գայմագամ մը խումբ մը ժանտարմաներով կրնկերանար իրենց աշխատողները պաշտպանելու համար: Կը հասնին Սուրբ Փրկիչ վանքի մօտ Գարատաղի անտառը, ուր գործի կը ձեռնարկեն: 1915 մայիսի 3-ին շրջակայ թիւրքերը և քիւրդերը կը յարձակին հայերուն վրայ և իրենց իսլամ ընկերներու աչքերուն առաջ կը սկսին կացիններով սպաննել հայ բանուորները: Շատերը կը վիրաւորուին և ոմանք գետ նետուելով կազատին: Գայմագամի օգնականը, որ հայ ժանտարմա մըն էր, երկաթուղիի ընկերութեան կողմէ կը բողոքէ կառավարութեան և կը պահանջէ, որ յանցաւորները պատժուին: Կառավարիչը, բաւական ոյժ չունենալով իր տրամադրութեան ներքեւ, կը դիմէ Ադիսմանի գայմագամին և օգնութիւն կը խնդրէ: Բայց Ադիսմանի գայմագամը կը մերժէ և կը պատասխանէ.

– Ես եմ արձակած այդ թիւրքերը և քիւրդերը հայերու վրայ. ես ստացած եմ այնպիսի հրամաններ, որոնց համեմատ ստիպուած էի գործել. արդէն պիտի տեսնես, որ մեր գիւղաքաղաքին մէջ հայ չէ մնացած ու աստին-անտին պահուածներն ալ պէտք է ինձի յանձնես. որոշուած է, մարդիկը պիտի կոտորուին ու կիները և երեխաները պիտի քշուին դէպի Միջագետք:

Այդ միջոցին նկատեց, որ գայմագամի ընկերացողը հայ է, պահանջեց, որ յանձնուի, ապա թե ոչ սպառնաց, թե բռնի կերպով զինքը կը ձերբակալեն: Գայմագամը, չուզելով յանձնել իր ընկերը, կը ջանայ համոզել Ադիամանի կառավարիչը, բայց անիկա չուզեր ոնէ առարկութիւն լսել և բոլոր աղերսանքներուն ի պատասխան ցոյց կուտայ իր ստացած հեռագիրը: Մեծ դժուարութիւններով կը յաջողին ազատել անոր, որ անմիջապէս կը փախի և կերթայ դէպի Հալէպ:

*Կիլիկիոյ տեղահանութիւնը. Զէյթուն. Տէօրթ-էօլ  
(Չորք Մարզուան). Հաճն. Այնթապ():*

Սուրիոյ բանակին հրամանատար Ճէմալ փաշա (որ Ատանայի կոտորածներէն ետքը Ատանայի և Հալէպի վիլայէթներուն կուսակալ եղած է) նամակ մը կը գրէ Կիլիկիոյ Մահակ կաթողիկոսին և կը դրդէ գայն, որ իր ժողովուրդը յորդորէ հլու և հնազանդ գտնուելու: Կը յիշատակէ մասնաւորապէս Զէյթունի, Հաճրնի, Տէօրթ-էօլի հայերը, որոնք իրենց դիմադրութեամբ միշտ խանգարած են կառավարական դիտաւորութիւնները, և կազդարարէ Կիլիկիոյ կաթողիկոսին, որ ամեն միջոց գործ ածէ, որպէսզի այդ ժողովուրդը կէտ առ կէտ հետևի զինուորական հրամաններուն և պատրաստ ըլլայ հնազանդելու նոյնիսկ, երբ տեղահանութեան հրաման արձակուի: Ի փոխարէն կը խոստանայ օգնութիւն և պաշտպանութիւն Կիլիկիոյ տեղահան եղած ժողովուրդին, եթէ հարկը պահանջէ:

Մահակ կաթողիկոսը կը հաղորդէ Ճէմալ փաշայի հրամանը իր բոլոր թեմերուն եկեղեցւոյ պաշտօնեաներու միջոցաւ, և մասնաւոր եկեղեցականներ կը դրկէ Զէյթուն, Հաճրն և Տէօրթ-էօլ, որպէսզի կացութեան բացառիկ դժուարութիւնները հաղորդեն ժողովուրդին:

Զէյթուն. Զինուորական փախստականներու պատճառաւ Զէյթունի չորս թաղապետները բանտարկուած էին և Նազարէթ Չաւուշը (յայտնի ժողովրդական հերոս) բանտի մէջ սպաննուած էր ծեծի տակ: Իր տղան ուրիշ զինուորական փախստականներու հետ կը բարձրանան լեռը և կը մերժեն յանձնուիլ կառավարութեան: Այդ խումբ մը երիտասարդներու արարքը կը համարեն զէյթունցիներու ապստամբութիւն և այդ պատճառաւ կը սկսին չարաչար նեղել քաղաքացիները: Լուրը կը հասնի փախստականներուն, որոնք զայրացած իրենց ընտանիքներու կրած նեղութիւններէն՝ կիջնեն քաղաք, կը յարձակին բանտին վրայ, կազատեն չորս թաղապետները, որու միջոցին կռիւ տեղի կունենայ, բայց երկուստեք մարդու կորուստ չեն ունենար: Տեղւոյն կառավարութիւնը սարսափահար կը մեծցնէ դէպքը և ինչպէս միշտ կը պատահի, արդարացնելու համար իրենց անկարողութիւնը, որ չէին յաջողած բանտը պաշտպանիլ յարձակողներուն դէմ, իշխանու-

թեանց կը դիմէ և կը յայտարարէ, թէ Ձէյթուն ապստամբած է, յարձակեցան կառավարութեան վրայ և շուտափոյթ օգնութիւն անհրաժեշտ է: Անմիջապէս Հալէպէն 3000 ձիաւորներ կը մեկնին առաջնորդութեամբ Ֆահրի փաշայի, որուն կը միանան Այնթապի և Մարաշի պահեստիները, որով 10,000-նոց բանակով մը կը քալեն Ձէյթունի վրայ: Ոնէ դիմադրութեան չի հանդիպելով, զօրքը հանդարտ կը մտնէ Ձէյթուն և անմիջապէս կը ձերբակալեն մինչև 30 տարեկան 300 տղամարդ և կը քշեն Դամասկոսի Հաւրան անապատը: Արաբ զինուորներ տեղեկացուցին, որ այդ 300 հոգին ամբողջովին սպաննուած են անապատին մէջ: Ձէյթունի մնացեալ ժողովուրդը մաս-մաս ենթարկուեցաւ տեղահանութեան: Ասոնք ղրկուեցան Պերէճիք, անկէ Ուրֆա, անկէ Հորան, ուր մնացին երկար ատեն: Հորանի մէջ տեղահան եղած զէյթունցի ժողովուրդին իբր պաշտպան կարգած էին թիւրք զինուորական մը, որ մեծ ատելութեամբ վառուած էր իր հսկողութեան յանձնուած ժողովուրդին նկատմամբ: Անիկա կը յորդորէր իր զինուորները վրէժ լուծել այդ կիներէն ու աղջիկներէն, որոնք շատ թիւրք զինուորներ սպաննած էին<sup>(\*)</sup>: Երկու երկրաչափներ, որ անցեր էին Հորանէն, պատմեցին այս ծանր դրութեան մասին: Թիւրք զինուորականը երկու զէյթունցի հայ աղջիկներ ղրկած էր իբրև նուէր այդ երկրաչափներուն զանոնք պատուելու համար:

Ձէյթուն տեղահան եղած ժամանակ թոյլ չեն տար ժողովուրդին իրենց հետ առնել ոչ գոյք և ոչ ալ փոխադրութեան միջոց: Միայն ունէին իրենց կրած հագուստը և 3 – 4 օրուան պաշար: Ձէյթունը հայերէն դատարկելէն անմիջապէս ետքը կը լեցնեն ռումելեցի թիւրք գաղթականներով, որոնք անմիջապէս կը տիրանան մեկնողներու տուներուն, կայքերուն և պաշարներուն:

Տեօրթ-եօլ. Կառավարութիւնը ամբաստանեց Տեօրթ-եօլի հայերը, թէ յարաբերութեան մէջ մտած են անգլիական մարտանաւերուն հետ, և այդ պատրուակով հաւաքեց այրերու մեծամասնութիւնը, որոնք ուղարկուեցան դիրքեր շինելու, խրամներ փորելու և այլ ծանր աշխատութեանց: Իսկ կիները և մանուկները տեղահան ընելով, ղրկեցին Հալէպ, ուր հանգիստ վիճակի մէջ կը մնան, մանաւանդ որ այրերն ալ իրենց յանձնուած գործը լրացնելով, եկան միացան իրենց ընտանիքներուն Հալէպի մէջ և շրջակայքը, ուր կը զոյգադին երկրագործութեամբ և մանր առուտորով:

Հաճրն. Ֆահրի փաշան Ձէյթունը տեղահան ընելէ ետքը իր զինուորներով անցաւ Հաճրն: Այստեղ հայ ժողովուրդը տեսած ըլլալով արդէն միւս տեղերու տեղահան եղած ժողովուրդին թշուառութիւնը, անմիջապէս չի հնազանդեցաւ և խաղաղ դիմադրութիւն ցոյց տուաւ: Ամեն ընտանիք իր տան մէջ ամրափակուած էր, շուկան և փողոցները ամայի էին, կառավարական հրամանները, որ մունետիկներու միջոցաւ կը գոչէին փողոցներուն մէջ, կարծես թէ պարապ քաղաքի մը կուղղուէին: Չուզելով բուռն միջոցներու դիմել, Ֆահրի փաշան բանակցութեան

մտաւ տեղոյն երևելիներուն հետ և խոստումներ ընելով ու հաւաստելով, թէ պատերազմական անհրաժեշտութիւն մըն էր տեղահանութիւնը, թէ ժողովուրդը անվնաս պիտի հասներ իր տեղը և այլն, յաջողեցաւ համոզել: Հաճընի հայ ժողովուրդը փոխադրուեցաւ Հալէպի շրջանները:

Այնթապ. Կիլիկիոյ ամենէն շէն և ծաղկեալ քաղաքներէն մէկն է Այնթապ: Ունի 70,000 բնակիչ, որուն 10,000-ը հայ են, իսկ մնացեալը քիւրդ և թիւրք: Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետքը կազմուեցաւ կրթական յանձնաժողով մը, որուն նպատակն էր կիլիկեցիներու նիւթական օգնութեամբ հաստատել բարձրագոյն վարժարան մը: Ադանայի ջարդը արգելք եղաւ այս ծրագրին գործադրման, բայց այնթապցիք իրենց սեպհական միջոցներով բացին ճեմարան մը, որուն նպատակն էր ուսուցիչներ պատրաստել: Հակառակ որ այնթապցիք ընդհանրապէս թրքախօս են, մեծ սէր ունին դէպի ուսմունք և ազգը, և մեծ ոգևորութեամբ նոյն իսկ տարեց մարդիկ կը ջանային հայախօս դառնալ: Ունին 10 երկսեռ վարժարան, որքանոց, արհեստանոց և այլն: Բացուած էին նոր լսարաններ արանց և կանանց համար առանձին և կազմակերպած էին թատերախումբ մը: Բնականէն օժտուած ըլլալով, մեծ յառաջադիմութիւն ցոյց կուտային երաժշտական արուեստի մէջ մասնաւորապէս:

Ուսման սէրը, քաղաքակրթութեան ընդունակութիւնը, որ զիրենք կը յատկանշէ, Այնթապը դարձուցած էր Կիլիկիոյ կրթական կեդրոնը: Իրենց դպրոցներն են, որ ամեն կողմերուն կը հայթայթէին ուսուցիչ, ուսուցչուհի, քահանայ, վարդապետ և այլն: Ամեն տարի ժողովուրդի ծախքով 3 ընդունակ ուսանող կը դրկէին Ամերիկա և Եւրոպա, ինչպէս նաև բազմաթիւ սաներ կը պահէին տեղոյն ամերիկեան քոլէճին մէջ, որուն ամբողջ աշակերտները հայեր էին:

Այնթապի տնտեսական վիճակն ալ շատ բարգաւաճ էր. շրջակայ այգիները մեծ առատութեամբ կուտային ամեն տեսակ պտուղներ, մասնաւորապէս խաղող և պիստակ, որը մեծ եկամուտ կապահովէր Այնթապի: Միայն պիստակը կուտար տարեկան 500,000 ոսկի: Օսմ. սահմանադրութենէն ետքը մեծ զարկ ստացաւ վաճառականութիւնը, և Այնթապ կեդրոնը դարձաւ Հայաստանի հարաւային-արևմտեան նահանգներուն (Սեբաստիա, Խարբերդ, Երզնկա, Մալաթիա և այլն): Արհեստները շատ զարգացած էին և հայերու ձեռքն էին, մանաւանդ ջուլհակագործութիւնը, որուն արդիւնքը տարածուած էր երկրին ամեն կողմերը: Կանանց ձեռագործները շատ յարգի էին մանաւանդ Ամերիկայի մէջ: Միայն Այնթապ քաղաքին մէջ շաքարական 200,000 դրուշի ապրանք կը գնուէր:

Այնթապ լեռնային ըլլալով շատ մաքուր օդ ունի, առատ և վճիտ ջուր և ջերմուկներ: Ժողովուրդը բարեկազմ է, ընդհանրապէս գեղեցկադէմ և շատ ուրախ տրամադրութեան տէր: Խաղաղ ժամանակ գրեթէ միշտ սոնական և զուարթ

երևոյթ ունի այս շրջանը: Շրջակայ գիւղերու մէջ շատ զարգացած է երկրագործութիւնը և այգեպանութիւնը:

Երբ տեղահանութեան հրամանը եկաւ, քաղաքի հարուստներու մէկ մասը յաջողեցաւ կաշառքի շնորհիւ այս կամ այն կերպ ազատուիլ: Կառավարութիւնը 5 օր պայմանաժամ տուաւ ժողովուրդին, ուրկէ ետք թաղ թաղ սկսան արտորել: Այնթապցիք հապճեպով ծախեցին իրենց տուները և գոյքերը, և կառքով, ձիով, ուղտով կամ էշով համեմատաբար հանգիստ ճամբայ ելան, անտէր ձգելով իրենց շէն և գեղեցիկ երկիրը: Աքսորեալ ժողովուրդը բաժանուեցաւ 4 – 5 ճիւղերու. մէկ խումբը հասաւ Մաճուրի կայարանը, ուր մնաց որոշ ժամանակ, հակառակ որ այդտեղ ապրիլը բաւական դժուար էր:

Ես Մաճուրի կայարանը կը գտնուէի, երբ տեղի ունեցաւ տարօրինակ հանդիպում մը: Այնթապցի հայ զինուորները թիւրք բանակին հետ կը տեղափոխուէին Կ. Պոլսէն Պատղաստ: Երբ կառախումբը կեցաւ և զինուորները իջան պահ մը ջուր խմելու, յանկարծ հայ զինուորները նշմարեցին խումբն արգելութիւնը տեղական ժողովուրդին, որոնք ցրուած, թշուառ և լալազին խոնուած էին աստին անդին և սարսափով նոր հրամաններու կրսպասէին: Զինուորները կը ճանչնան իրենց քաղաքացիները և այլ ևս չանսալով ոնէ հրամանի, կը խառնուին դժբախտ ժողովուրդին մէջ: Կը համբուրուին, կը գիրկընդխառնուին, մանուկներ իրենց հայրերը կը գտնեն, դողդոջուն պատաւներ կը փարեն իրենց զաւակներուն. լացի և ողբի աղաղակ մը կը տիրապետէ մթնոլորտին: Հայ զինուորները չեն հասկնար, չեն կարող հասկնալ այս անսպասելի դժբախտութեան պատճառը և դիմելով իրենց հազարապետին, կը բողոքեն:

– Ի՛նչ, իրենք երթան իրենց կեանքը զոհելու ու իրենց ընտանիքները, իրենց զաւակները ենթարկուին այդ սոսկալի կացութեան, ի՛նչ է պատճառը, ի՛նչ յանցանք կարող էին գործել կիներ ու երեխաներ, որոնց այրերը ու հայրերը թիւրքական բանակին մէջ կը ծառայէին:

Հազարապետն ալ կը շուարի, ինքն ալ չի հասկնար. կը ջանայ ամոքել իր հայ զինուորներուն զայրոյթը, որոնցմէ դժգոհելու ոնէ պատճառ չէր ունեցած մինչև այն ատեն, կը յուսադրէ զիրենք, կը խոստանայ կարգադրութիւն մը ընել, երբ ահա խիստ հրաման մը կու գայ և կազդարարէ հազարապետին վարուիլ առանց խնայելու:

Ամեն կողմէ հրամաններ կորոտան զօրքը բաժնելու ժողովուրդէն, բայց ամենախիստ և բիրտ միջոցները պահ մը անզօր կը մնան: Շփոթութիւնը, աղմուկը, լացի աղաղակները, մտրակներու շաչիւնը իրար կը խառնուին ու մեծ ջանքերով և բռնի կերպով հազիւ թէ կը յաջողին հայ այնթապցի զինուորները խլել իրենց անտէր ընտանիքներէն. զգուշութեան համար զանոնք կը բանտարկեն փակ վազոններու մէջ: Այսպէս կը բաժնուին խեղճերը, բայց զայրոյթի, բողոքի, աղերսան-

քի աղաղակները երկու կողմէն կը լսուին տակաւին, երբ կառախումբը շտապով կը մեկնի: Կէս ճանապարհին, անմիջապէս որ կարելի կըլլայ, հայ զինուորները կը նետուին պատուհաններէն իրենց ընտանիքներուն օգնութեան հասնելու համար, բայց իբր ըմբոստ և փախստական զինուոր հետապնդութեան կենթարկուին և շատերը կը մեռնին:

Միւս կողմանէ Մաճուրի սպասող այնթապցի տեղահանուած ժողովուրդը հապճեպով ճամբայ հանեցին և ղրկեցին Պուպուճ (Եփրատի և Հալէպի մէջտեղ):

Այնթապի ժողովուրդին երկրորդ խումբը բերին Պերեճիք, ուր մնաց 20 օր լաստեր պատրաստելու համար: Կառավարութիւնը նախապէս խոստացած էր փոխադրութեան միջոցները հայթայթել, բայց վերջին պահուն յայտներ էին, թէ փայտը կը պակսի, չեն կարող լաստեր տրամադրել և թէ պէտք է որ ոտքով երթան: Այն ատեն խեղճ ժողովուրդը յուսահատած, կանանց զարդերը կը հաւաքեն, կը յանձնեն կառավարութեան, որպէսզի փոխարէն հարկ եղած նիւթը հայթայթէ և իրենք շինեն իրենց լաստերը: Այս պատճառով 300-ի չափ հայեր Եփրատի դիմացի ափը բաց օդին կըսպասէին 15 գոյգ լաստերու շինութեան: Ամեն օր թիւրքեր և քիւրդեր կուգային աղօթիկներ և կիներ գնելու, հակառակ որ միշտ այնթապցիք սոսկումով կը մերժէին այդ առաջարկութիւնները: Բարեբաղդաբար հսկիչ ժանտարմաները թէն արգելք չէին ըլլար, որ այդ կարգի բանակցութեան մտնեն թիւրքերը հայերու հետ, բայց թոյլ չէին տար նաև, որ մերժումի պարագային չարաչար վերաբերուին խեղճերու հետ:

Երբ լաստերը պատրաստուեցան, ժողովուրդը ճամբայ ելաւ և Եփրատի վրայով հասաւ Ճալապլուզի առաջ: Հսկիչ ժանտարմաները և մակուկավարները անմիջապէս դիմեցին տեղւոյն գայմագամին և արտօնութիւն խնդրեցին իրենց առաջնորդած ժողովուրդը գետը թափել: Գայմագամը մերժեց այդ հրամանը տալու և յայտնեց, որ անոնք պէտք է հասնին իրենց սահմանուած վայրը:

Այլ սակայն ժողովուրդը ծայրայեղ յուսահատութեան մատնուած էր: Չէին գիտեր, թէ ուր կ'երթան, ինչո՞ւ համար կ'երթան: Այր, կին, երեխայ խառն ի խուռն մնացած էին և կարծես մարդկային ամեն զգացումէ զուրկ դարձած էին. մանուկի լացին մայրը անուշադիր, իրարու անկարեկից, իրարու հետ չէին խօսակցեր իսկ: Մէկ մտածում կը տիրապետէր իրենց, և ամեն մէկը միակ հարցում մը կուղղէր «արդեօք մեզի ի՞նչ պիտի ընեն»: Ոմանք տակաւին հաւատք ունէին, թէ այս բոլորը առժամանակեայ բան մըն է, մէկ երկու ամիսի խնդիր, և թէ շուտով պիտի վերադառնան իրենց ծննդավայրը. բայց մեծամասնութիւնը տոգորուած էր սարսափահար ապշութիւնով, և սաստիկ անձկութիւնը բթացուցած էր իրենց մէջ նոյնիսկ իրենց ամենէն բնական զգացումները:

Այս խումբէն 30-ի չափ այնթապցիներ 1915 նոյեմբեր 12-ին վերադարձան և կերթային Պերեճիք դատուելու համար: Զոյգ մը լաստեր քայքայուեր էին ճամ-

բորդութեան միջոցին և մէջը գտնուողները ցամաք ելած ու գացած էին արաբ գիւղ մը նորոգելու համար իրենց լաստերը: Թիւրք ժանտարմաները զիրենք կամբաստանէին իբր ասպտամբ և այդ երկար ճամբէն հետիոտն կը վերադարձնէին դէպի Պերեճիք: Փոշիներու մէջ ծածկուած մեծ ու փոքր խառն, բոկոտն, ցնցոտիներ հագած անոնք կուգային սպառած յոգնութենէ և թշուառութենէ: Թոյլ չէին տուած իրենց ունէ գիւղ կանգ առնել, հանգստանալ կամ կազդուրուիլ: Փախստական խայիներ կը կոչէին զիրենք, և խաղալիք դարձեր էին ժանտարմաներու անխղճութեան: Իրենց հետ կային մանուկներ, որոնք մօրերնուն քղանցքներէն կախուած կը քաշքշուէին և որոնց համար նոյնիսկ մայրական սիրտը ցամքած էր: Իրենց ճիչերուն և լացերուն յուսահատած մայրերը կը պատասխանէին ախով և վախով: Հիւանդ թէ մատաղատի՝ տարբերութիւն չունէր իրենց դահիճներուն համար, որոնք մտրակի հարուածներով կը հարկադրէին, որ այդ դժբաղդները յառաջանան ժանտարմաներու ձիւներուն արագութեամբ, և ամեն տեղ թիւրք ժողովուրդը լուսանքներով և ծաղրով կը դիմաւորէր զիրենք:

Այնթապի ժողովուրդին միւս երկու խումբերը գնացքներով դրկուեցան Համա և Հոմս, որոնք Դամասկոսի ճամբուն վրայ կայարաններ են: Ճալապլուզի մէջ կը գտնուէր երկաթուղիի հայ պաշտօնէայ մը, որուն ընտանիքը կը գտնուէր արքայականներու այս խումբերուն մէջ: Ասիկա թիւրքերէն նամակ մը ստացաւ իր հարազատներէն, որոնք կըսէին, թէ իրենք հանգիստ են ու կաշխատին արհեստով: Իրենց արքայավայրերուն մէջ Այնթապի հարուստ և բարեկիրթ ժողովուրդը օրական ապրուստը ճարելու համար կըզբաղէր ընդհանրապէս կլայեկութեամբ, պղնձագործութեամբ և ջուլհակութեամբ:

Կիլիկիոյ զանազան վայրերու տեղահանութիւնը յաջորդաբար տեղի ունեցաւ: Մարաշ և իր շրջակայքը, Ատանա, Մերսին, Միս գրեթէ նոյն պայմաններու մէջ զրկուեցան իրենց տանէն, տեղէն, իրենց աշխատութեամբ և ժրաջանութեամբ ձեռք բերած հարստութենէն և բարեկեցիկ կեանքէն: Հարուստները կը մնային Հալէպ և շրջակայքը, բայց անոնք, որ ունէ միջոց չունէին իրենց ծննդավայրէն դուրս ապրելու և բեռ կըլլային կառավարութեան, կը դրկուէին դէպի Միջագետք:

Կիլիկիոյ տեղահանութիւնը կազմակերպուած է Մուրիոյ բանակին հրամանատար Ճէմալ փաշայի ծրագրով և գործադրութեանը հսկած է Ֆահրի փաշա: Կիլիկիոյ բնակչութեան տեղահանութիւնը եղած է համեմատաբար կանոնաւոր, գոնէ բացարձակ բնաջնջման չեն ենթարկուած այրերը և իրենց սահմանուած արքայրաւայրը հասնելէ ետքը կըրցած են միանալ իրենց ընտանիքներուն և կերպով մը քաշքշել իրենց բաժին ինկած դժուարին կեանքը:

*Հարուստ գիւղի մը պատմութիւնը. Հասնող գաղթականներու երեւոյթը.  
Նուաղած կինը. Գիշերային յարձակումներ. Բողոք մը թիւրք  
իշխանութեանց մօտ:*

Այնթապի հիւսիսային կողմը Եփրատի մօտ կար 150 տուննոց հայ հարուստ գիւղ մը, որ գլխաւորաբար կը զբաղէր պիստակի արտածութեամբ, որով ունէր տարեկան 200,000 ոսկիի եկամուտ: Տեղահանութեան հրամանը կարձակուի և երկու օր պայմանաժամ կուտան գիւղացիներու, որպէսզի մեկնելու պատրաստուին: Շրջակայ քիւրդ գիւղացիները վաղուց ի վեր կը նախանձէին հայերու հարուստ վիճակին և յաճախ գաղտնաբար կուզային, կը վնասէին ծառերուն, որոնք հայերու հարստութեան աղբիւրը կը կազմէին: Առիթը այս անգամ կը ներկայանայ շատ նպաստաւոր կերպով մը իրենց չարագործութեանց յագուրդ տալու համար: Մեկնելու դատապարտուած ժողովուրդը տակաւին գիւղն էր, երբ քիւրդերը կը յարձակին և կսկսին կողոպտել, յափշտակել և դժբաղդ ժողովուրդին կայքերը կը փոխադրեն իրենց գիւղերը: Միննոյն ժամանակ ժանտարմաները և զինուորականները քիւրդերու առաջնորդութեամբ կը պեղէին գետիները, կը փլցնէին պատերը և թագնուած ոսկի կը փնտռէին: Ոչ մէկ խղճացող, ոչ մէկ բարեկամ չի գտնուիր նոյն իսկ դրացի իսլամ գիւղացիներու մէջ, հակառակ որ հայերը շատ աժան գիներով ծախած էին իրենց ապրանքները (100 այծը երկու ոսկիի), և իրենց տաւարը առանց փոխարինութեան յանձնած էին դրացի քիւրդերուն ըսելով. «Եթէ ողջ վերադառնանք, մեզ կը վերադարձնէք, հակառակ պարագային հէլալ ըլլայ»:

Հայ գիւղացին ականատես ըլլալով այս կողոպուտին և որոնումներուն, յուսահատ կերպով ճամբայ կելլէ այն հաստատ համոզումով, որ դէպի մահ կերթայ:

Աքսորեալներու տխուր կարաւանը կը յառաջանայ 10 ժանտարմայի հսկողութեան ներքն, որոնք իրենց անգութ քմահաճոյքներուն համեմատ կը չարչարէին ժողովուրդը: Կիները և այրերը առանձին խումբերու բաժնեցին և նոյն իսկ գիշերները, երբ կը կենային, թոյլ չէին տար, որ մարդիկ իրենց ընտանիքներուն մօտենան և ունէ կերպով անոնց օգնեն: Միննոյն ժամանակ այրերը խումբ խումբ կը ենթարկէին տաժանելի աշխատութիւններու. ճամբաները հարթել, քարերը մաքրել և ուրիշ նման զբաղումներ տալով, թոյլ չէին տար, որ պահ մը հանգստանան: Երբեմն ալ զանազան պատրուակներով կը տանէին Եփրատի եզերքը ու յանկարծակիի բերելով, մէկ մէկ կը զլոռրէին գետը: Կիները երբ կիմանային, որ դարձեալ մարդիկ անհետացեր են, դառն յուսահատութեան կը մատնուէին և ամեն մէկը, կարծելով որ իր հարագատն է կորսուածը, ողբալով և արտասուքէ պղտորած աչքերով կը փնտռէին հեռուն փոշիի ետև կորսուած բազմութեան մէջ իրենց զուակը, եղբայրը կամ ամուսինը: Եթէ ճամբորդութեան միջոցին խումբերը ունէ դիպո-

ւածով մերձենային իրարու, արգելուած էր իրենց խօսել ու լսել, սարսափահար իրենց յուսահատ նայուածքները կը հանդիպէին միայն իրարու:

Մինչև Ճալապլուզ հասնելը 15 երիտասարդներ գետը նետելով սպաննած էին:

Երբ մուտք պատէր աշխարհը, ամեն իրիկուն արտրեալները կիջնէին իրենց էշերէն ու կանգ կառնէին այն տեղին վրայ, որ իրենց ժանտարմաները ընտրէին: Կիները ու երեխաները առանձին ու անպաշտպան էին, ու ամեն գիշեր իրենց վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաները միանալով շրջակայքը գտնուող ժանտարմաներուն, կը կողոպտէին և կը խլէին, ինչ որ ունէին իբր զարդեղէն կամ դրամ, և ամեն անգամուն մեծարժէք աւար ձեռք կանցունէին:

Յունիսի վերջերն էր, երբ Ճալապլուզի մէջ լսեցինք, որ հայ գաղթականներ կուգան: Անմիջապէս դուրս ելանք և ահա տեսանք, որ մօտակայ բլուրէն վար կիջնէին արտրեալները: Յոգնութենէն, ջերմութենէն այլակերպ դարձած էին: Էշերը գոյգ գոյգ կընթանային և ամեն մէկուն վրայ կար կին մը երեխաներ առջը, ետնը, երբեմն ալ մէկ հաստ գիրկը: Կիները գլուխներնին ճերմակ լաթեր փաթթած էին արնէն պաշտպանելու համար, և ճամբու դժուարութիւնները, հոգեկան և ֆիզիքական տառապանքը այնպիսի վիճակի մը վերածած էին զիրենք, որ անկարելի էր երիտասարդը պատուէն զանազանել: Այրերու խումբն ալ կը ներկայացնէր նման պատկեր. արևակէզ, պապակած, շուարուն, անոնք կը նայէին կարծես առանց տեսնելու, և իրենց շարժումները անկապ դարձած էին սարսափի ու ցաւի ազդեցութեան ներքն:

Այսպէս կը յառաջանային, շտապելով և ժանտարմաներու հապճեպ և խոպոտ ձայներուն հնազանդելով, երբ առուակի մը մօտեցան, ուրկէ պէտք է անցնէին: Խելագարներու պէս իջան իրենց էշերէն և ինկան առուակին վրայ, որուն ջուրը աղտոտ էր և պղտոր: Մարդ, կենդանի, մեծ, պզտիկ անյազաբար դիմեցին դէպի ջուրը և իրենց աճապարանքին մէջ խենթի աննպատակ շարժումներ ունէին, ոտքերնին, կուրծքերնին կը թրջէին և չէին յաջողեր բերաննին մօտիկցնել ջուրին: Ումանք կը նուաղէին, իսկ կիներէն շատերը ամօթի ամեն զգացում կորսնցուցած զայրոյթով և հապճեպով մէկ կողմ կը նետէին իրենց հագուստները և մերկանալով, ջուրին մէջ կը մտնէին: Այս բոլորը կատարուեցաւ տարօրինակ լռութեան մէջ և տարօրինակ արագութեամբ, և ոմանց շրթունքը հագիւ թէ ջուրին հասած էր, երբ ժանտարմաները սկսան պոռալ և սպառնալ: Զանազան հրամաններու գոռում գոչումին մէջ կը լսէինք սա խօսքերը. «Ալ կը բաւէ, շատ հանգիստ ըրիք»: Պապակած ժողովուրդը առանց յագենալու ինկաւ իրարանցումի մէջ: Էշերը կը փնտռէին, զիրար կը փնտռէին, մինչ հրամանները աւելի կը շուարեցնէին զիրենք: Իրարու վրայ կոխտտելով, այսահարի շարժումներով կերթային աստիճանդին, մինչ ժանտարմ մը կը պոռար և ուրիշ մը կը հարուածէր: Մանուկները ցրուած էին այս ու այն կողմ, և շրջակայքէն եկած քիւրդեր օգուտ քաղելով շփո-

թուփենեն, հապճեպով կը դարձնէին երեխաներուն դէմքերը, կը նայէին և կուզէին գեղեցկադէմ մանուկները իրենց մէջլահին (վերարկու) մէջ պահելով տանել: Այն ատեն մօտիկնալով քիւրդերուն, միջամտեցի և արգելք եղայ, որ երեխաները առնանգեն: Ճալապլուզի հայերը տակաւին քաղաքացիական իրաւունք կը վայելէին, և իմ միջամտութիւնս ապարդիւն չանցաւ:

Աքսորեալներու կարաւանը կազմուեցաւ և կամաց կամաց քաշուեցաւ դէպի ճամբան: Ջուրի ափին մնաց ծեր կին մը, որու վրայ ինկած մօտաւորապէս 17 տարեկան աղջիկը կուլար և մայրիկ կը կանչէր: Կինը գրեթէ անշնչացած էր: Ուրիշ տարեց կին մը, որ նուազած պատաւին քոյրն էր, կուրծքը ծեծելով կուլար և եղերերգ՝ (մէնի) կըսէր: Ուրիշ երկու ծեր մարդիկ մօտակայ առուակէն իրենց ֆեսերով ջուր կը բերէին, որովհետև ունէ ուրիշ աման չունէին, և կը լեցնէին նուազած կնոջ վրայ, այնպէս որ խեղճը բոլորովին թրջուած էր: Բարեբաղդաբար ժանտարմաները զբաղած էին իրենց կարաւանով և իրենց ետև չէին նայիր: Կորսուած իրենց իրարանցումէն և աղաղակներուն մէջ քսորեալները կը յառաջանային, փոշիի ամպ մը բարձրացնելով, մինչ առուակին քով կնոջ եղերերգը հեծեծելով, կը բարձրանար առանձին: Ժանտարմ մը վերջապէս նշմարելով ջուր բերող այրերը, կանչեց զիրենք: Անոնք հարկադրուեցան մեկնիլ և մնացին միայն կիները, որոնք կը շարունակէին իրենց լացը երգել: Այդ պահուն քանի մը քիւրդեր, լռին ու դաժան, շուրջերնին կեցած կըսպասէին, որ կարաւանը անհետանայ և կարենան յափշտակել գեղեցիկ ու երիտասարդ աղջիկը:

Ես ալ այնտեղ կեցած էի և զգալով քիւրդերուն դիտաւորութիւնը, չէի հեռանայ: Վերջապէս աւելի յարմար սեպեցի աղջիկը և մօրաքոյրը առաջնորդել դէպի կարաւանը իրենց գիւղացիներուն մօտ և յորդորեցի զիրենք ինձ հետևիլ: Մայրը մեռած համարեցինք և լաթով մը ծածկելով զայն, հեռացանք առուակէն: Շտապով կը քալէինք, բայց երկար ատեն քիւրդերը հետևեցան մեզի և անյայտացան միայն այն ատեն, երբ մենք մօտեցանք քսորեալներուն: Տարեց կինը կը շարունակէր երգել իր տխուր երգը և երբեմն ետ կը դառնար տեսնելու համար քրոջ դիակը, իսկ աղջիկը արցունքներու մէջ կորսուած կը հեծեծէր: Ծունկերը կը կթոտէին և դժուարաւ կը քալէր:

Աքսորեալներու կարաւանը հասաւ Ճալապլուզ և եկաւ կեցաւ գայմազամի դրան առաջը հրահանգ ստանալու համար: Այն ժամանակ կըրցայ տեսնել, որ 800 հոգիէ բաղկացած խումբ մըն էր. իջած էին էջերէն. յոգնած, անօթի, վիրաւոր, սպառած և քայքայուած, արցունքը երեսնուն, աչքերնին յառած դէպի կառավարչատան պատուհանները՝ հրամանի կըսպասէին: Ժամ ու կէս այդ անձկալի վիճակին մէջ իրենց տրուելիք վճիռին սպասելէ ետքը գայմազամը հաճեցաւ հրամայել, որ անմիջապէս մեկնին դէպի մօտակայ գիւղի մը դաշտերը գիշերը հոն անցնելու համար: Կարաւանը հսկող ժանտարմաները իբր վարձ պահանջեցին

տեղահան եղած ժողովուրդին 250 էջերը, որոնցմէ ամենէն գեղեցիկ 5 ճերմակ էջերը նուիրեցին գայմագամին: Անկէջ ետքը ամէն օր կը տեսնէի, որ գայմագամին տղաքը կը հեծնէին այդ էջերը և պտոյտի կերթային:

Վերադարձիս ուզեցի երթալ տեսնել, թէ ինչ եղաւ այն կինը, որ մեռած համարեցինք, բայց նկատելով որ քիւրդերը լարուած են իմ դէմ, ես անձամբ չի գացի և դրկէցի տեղոյն երկաթուղիի գիշերապահ հայախօս քիւրդ Ալի Տային: Մութին մէջ անշշուկ գիշերապահը կը մօտենայ պառաւին և կը տեսնէ, որ քիւրդ մը կը փորձէր բռնաբարել այն 70 տարեկան անկենդան կինը: Ալի Տային կը յարձակի քիւրդին վրայ, որ կը փախչի ծածկոյթն ալ հետը տանելով: Գիշերուան զովութիւնը և Ալի Տային ջանքերը կը յաջողին վերջապէս կինը սթափեցնել: Ուշ ատեն բերաւ գայն մեզ մօտ, և մենք գիշերապահին և ուրիշ քիւրդի մը օգնութեամբ գայն դրկեցինք արտրեալներուն գտնուած տեղը, որպէսզի իր աղջկան յանձնուի:

Լսելով թէ այս գիւղացիները որքան հարուստ էին և յուսալով, որ տակաւին իրենց քով կրնան ունենալ թագնուած ոսկի և զարդեղէն, տեղոյն ժանտարմայի գոմանտանին ընչաքաղցութիւնը կը գրգռուի և կէս գիշերին մէկ քանի ժանտարմաներու օգնութեամբ կը յարձակի խումբին վրայ: Քուներնուն մէջ խռովուած խեղճերը կը շուարին, և իրարանցումէն ու շփոթութենէն օգուտ քաղելով, կառավարութեան պաշտօնեաները կը սկսին մէկ մէկ խուզարկել, մերկացնել կիները, այրերը և մանուկները և կը կողոպտեն ու կը հաւաքեն այն յետին միջոցները դրամ, ոսկի, զարդեղէն, որ տակաւին յաջողած էին պահել իրենց հագուստներուն ծալքերուն մէջ այդ հարուստ գիւղի դժբաղդ արտրեալները:

Նոյն գիշերն էր. ուրիշ խումբ մը հայեր, այր ու կին խառն, որոնք Եփրատի աջ եզրի գիւղերէն տեղահան եղած էին, կանցունէին գիշերը Ճալապլուզի մօտ բաց դաշտին մէջ:

Չափազանց խաւար էր այն գիշեր. երկինքը աստղ չի կար. գետինը սև աւազով ծածկուած տափարակ, լուռ, ամայի: Եփրատն իսկ սևցած էր և իր ճերմկորակ հոսանքը չէր նշմարուեր համայնատարած մութին մէջ. լռեց շուներու լալիւնը և այլևս ոչ մէկ շշուկ այդ ծանր և խաւար գիշերին մէջ:

Տեղահան եղած ժողովուրդին խումբը ունէր իր պահակները, որոնք փոխն ի փոխ կը հսկէին, որպէսզի ոնէ յարձակում գիրենք գոնէ յանկարծակիի չի բերէ: Կէս գիշերը անցած ըլլալով, պահակները կը վերնան, և իրենց հետ գտնուող քահանան գիշերային և վերջին աղօթքը ընելէ ետքը, ամեն մըմունջ կը դադրի և յոգնութենէ սպառուած խումբը կը թաղուի խոր քունի մէջ:

Հսկող ժանտարմաները նախապես հեռացած էին դիտմամբ, և ժողովուրդի այդ բեկորը կը գտնուէր այդ պահուն անոք և անպաշտպան կորսուած՝ անսովոր երկրին մէկ անյայտ տարածութեան վրայ:

Տեղւոյն երկաթուղիի գիծի պաշտպան չերքեզ Մուստաֆա պէյ և թիւրք զինուորական Հասան էֆէնտի, որ Ադանայի կոտորածին վատ դեր կատարած ըլլալուն՝ կախանի դատապարտուած և յետոյ ազատուած էր, ընկերակցութեամբ քանի մը զինուորներու և խումբ մը չերքեզներու միակ լապտերով մը կը փնտռեն խաւարին մէջ հայ աքսորեալները: Չերքեզները կը հետախուզին ամեն կողմ և ահա իրենց սրած ականջներուն կը հասնի ծանր շնչառութեան հնքը հարիւրաւոր դժբաղդներուն: Կը մօտենան հետզհետէ, կը գտնան խումբը, և սուինները հրացաններնուն անցնելով, կը սողոսկին, կանհետանան խումբին մէջ: Քանի մը ճիչեր բեկ բեկ կը բարձրանան աստիէն անդիէն և աքսորականներու խումբը կալեկոծուի սոսկումով: Տակաւին սթափած չէին, երբ չերքեզները, առաջին շուարումէն օգտուելով, 6 – 7 աղջիկ պինդ բռնած և բերաննին գոց կը տանին հեռու, կը կապկպեն զանոնք և կը շտապեն վերադառնալ դէպի հայերը կողոպուտի համար:

Շատերը արթնցած են արդէն և իրարու ձայն կուտան. ի նչ ճիչեր էին. գէշ երա՞ մըն է արդեօք, որ վրդովեց զիրենք. ինչքա՞ն անգամներ ընդոստ կանգնած են այսպէս, մղձաւանջային աղաղակներէն խռովուած, երբ իրենցմէ մէկը կամ միւսը գէշ երագներու ազդեցութեան տակ կը գոչէ սոսկումով և արհաւիրքով: Այնքա՞ն յոգնած են և իրենց ջլատուած անդամները խրուած են խոնաւ աւազին մէջ, որ հակառակ իրենց հոգիներու խռովքին չեն ուզեր շարժիլ և իրարու կը մըմջեն՝ «բան չի կայ, բան չի կայ ...»:

Ծերերը կը նշմարեն սակայն լապտերին լոյսը և ահա կարթընցնեն բոլոր այրերը, իրարու քով կուգան և սրտադողով կը խօսակցին՝ «ի նչ լոյս է ստիկա»:

Այդ միջոցին չերքեզները և զինուորները կը յարձակին հայերու վրայ և զէնքի կոթերով, ոտքերով կը գարնեն, կը հարուածեն ու ամբողջ խումբը տակն ու վրայ կը դարձնեն: Մարդիկ կը ջանան իրենց կիները ու երեխաները վերցնել, անկիւն մը տանիլ: Խելակորոյս վիճակի մատնուած, շատերը քարացած կը մնան. քուն է ն թէ արթուն, ո՞ր կողմէ է յարձակումը, ի նչ կուզին իրենցմէ: Մղձաւանջային շփոթութիւն մը կը տիրէ: Մութը այնքան սաստիկ է, որ զիրար չեն ճանչնար, թշնամին ու հարազատը չեն կարող որոշել: Յարձակողներուն ատելութեան հնքը, հայհոյութիւն, անէծք կը խլանան այն սոսկումի և ցաւի միահամայն աղաղակին մէջ, որ աշխարհս կը բռնէ և որը նման չէ մարդկային ձայնի: Սուինները մութին և շփոթութեան մէջ իրարու կը հանդպին, կը խրուին ցաւով և կեանքով բարախուն տաք մարմիններու մէջ: Ոտքերու տակ կը կոխոտուին վիրաւորները ու մանուկները, ու կիներ աննպատակ շարժումներով կը վազին, կը վազվզին, կը

զարնուին իրարու, զիրար կը հարուածեն, իյնալէ առաջ սուր ճիչերով կը գոչեն իրենց վերջին ամենասիրելի անունը. Մայրի կ... Հայկանո՛ւշ... Եւրոն իմ...

Անդին լապտերին մօտ խուսք մը չերքեզներ և զինուորներ անվրդով կը լրացնեն իրենց կազմակերպած գործը: Մէկիկ մէկիկ կը բերեն իրենց մօտ արտրեալները, կը խուզարկեն, կը մերկացնեն, կառնեն ինչ որ գտնան՝ դրամ և զարդեղէն ու կը լեցնեն տոպրակ մը. կառնեն նաև լաւ հագուստները և փոխարէն ցնցոտիներ տալով, կանցնեն մարդը միւս կողմ և կը սկսին խուզարկել յաջորդը: Կիներ և աղջիկներ չեն ուզեր մերկանալ այդ վայրենիներուն դէմ, բայց չերքեզները բռնի կը պատտօտեն անոնց հագուստները և գումանտանը ու զինուորականը կը ծիծաղին ու կը զուարճանան այդ խղճալի մերկութիւններու վրայ:

Կողոպուտը կատարելէ ետքը չերքեզները և զինուորները հեռացան: Այն ատեն եկան տեղահանեալ ժողովուրդին վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաները և հրամայեցին հայերուն, որ լապտերին շուրջ ամփոփուին: Մթութեան մէջ զիր ու ցան եղած ժողովուրդը սկսաւ խմբուիլ: Մութին մէջ խարխափելով, ժողովեցին դիակնացած մանուկները, քակեցին առնանգուած աղջիկներու կապանքները և սկսան հեծկլտալով արտասուել և ափսոսալ:

Մանրամասնօրէն տեղեկանալով բոլոր անցուդարձին և նկատելով, որ տեղւոյն գայմագամը լաւութեան հետք մը ցոյց տուած է ուրիշ առիթներու մէջ, նոյն այդ յարձակումին ենթարկուող խումբէն երկու երիտասարդ առնելով հետերնիս, դիմեցինք կառավարութեան և բողոքեցինք: Գայմագամը մեզ լսելէ ետքը՝ մեզ դրկեց իր օգնականին, որ այն հարիւրապետ Հասան էֆէնտին էր, որ մասնակցած էր կողոպուտին:

Հասան էֆէնտի հայերու յանդգնութենէն գայրացած՝ նախատական խօսքեր ընելէ ետքը մեզ դրկեց չերքեզ Մուստաֆա պէլի մօտ: Երբ երկու երիտասարդները տեսան չերքեզը, ճանչցան գայն, դժգունեցան և ինձ ըսին, թէ այս մարդը երէկ գիշեր աւազակներուն գլուխն էր: Չերքեզը վաղուց ի վեր զիս կը ճանչնար, իր խոժոռ աչքերը դէպի ինձ դարձուց և ըսաւ գայրոյթով ու սպառնալիքով.

– Դուն առաջնորդեցիր զիրենք, այնպէս չէ՞. դուն դրդեցիր այդ խայիները, որ յանդգնին բողոքելու, սպասէ՛, ժամանակը կուգայ, այս բանը այսպէս չի մնար:

Յետոյ դառնալով երկու երիտասարդներուն, ըսաւ խստութեամբ.

– Եկէ՛ք, երթանք, չարագործները գտնանք:

Տարեր էր գանոնք հին բերդի մօտ Եփրատի եզերքը և իր կաշեղէն մտրակով գանոնք լաւ մը ծեծելէ ետքը՝ դաշոյնով մէկ մէկ զարկեր և դիակները նետեր էր գետափը:

Այս դէպքը պատճառ եղաւ, որ քանի մը ամիսէն Ճալապլուզէն մեկնիմ: Տեղւոյն հայ բանուորները բողոքեցին գերմանական երկայնուղային ընկերութեան: Մուս-

թաֆա պէյր հեռացուցին, Հասան էֆէնտին բաւական նեղեցին և գանգատը հասաւ մինչև Ճէմալ փաշային:

Իսկ արքայազներու խումբը, որ պէտք էր քանի մը օր հանգչէր Ճալապլուզի մօտ, նոյն օրն իսկ ճամբայ հանեցին դէպի Միջագետք:

Հայ մայր մը. Փոքրիկներ կը ծախուին. Յոյն կնոջ մը դերը:

Հոսքէլ լայր գորդիս իւր և ոչ  
կամէր մխիթարիլ, զի ոչ էին:

Յուլիս ամսուան մէջ Պերէճիքի շրջակայքէն և Եփրատի եզերքի գանազան վայրերէ հաւաքուած հայեր հասան Ճալապլուզի կայարանը՝ ընդամենը 1620 հոգի՝ այր, կին խառն և իրենց քահանաները միասին: Հետևեալ օրը գնացքով պիտի մեկնէին, և գիշերը անցնելու համար իրենց յատկացուցած էին կայարանի կից դաշտը, որ անհարթ և քարքարուտ տարածութիւն մըն էր: Աքսորեալները ճամբորդած էին մասամբ հետիոտն և մասամբ էշերով, բայց Ճալապլուզ հասնելէ ետքը էշերը գրաւեցին, ըսելով, թէ այլևս կենդանիի պէտք չունէին, քանի որ գնացքով պիտի ճամբորդէին:

Իրիկնամուտին ժողովուրդը սկսաւ քնելու տեղ պատրաստել: Քարերը կը հաւաքէին, գետինը կը հարթէին, երբ յանկարծ կեցան և դադրեցան աշխատելէ, որովհետև քարերուն ներքև գետինը թաց էր և լւարծուն ցելի մը կը ներկայացնէր: Երկու օր առաջ յորդ անձրևներ եկած էին, և ջուրը լճացած մնացեր էր քարերուն տակ: Յորեկուան սաստիկ տաքին յաջորդած էր թափանցող ցուրտ մը, և գետնի խոնաւութիւնը բոլորովին անտանելի կը դարձնէր դրութիւնը: Այնքան յոգնած և տանջուած էին տաժանելի ճամբորդութենէն, որ արքայազները սկսան ցրուիլ: Որոշ սահմանէ անդին անցնիլ անկարելի էր, այնպէս որ նստեցան քարերու վրայ, տարածեցին իրենց խոնջացած անդամները և շատերը սպառած յոգնութենէ՝ նետուեցան խոնաւ աւազներուն մէջ: Մանուկները միայն կը հանգչէին իրենց մօր գիրկը, բայց քիչ մը չափահասները, չդիմանալով կրած չարչարանքներուն, կուլային և կաղաղակէին: Լացի և աղերսանքի այս աղեկտուր ձայները լսելով, գացինք տեսնելու, թէ ինչ կայ: Երբ տեղեկացանք հազարաւոր հոգիներու այս անտանելի վիճակին, դրդեցինք զիրենք, որ քահանաները մէկ քանի հոգիներու հետ ներկայանան գայմագամին և արտօնութիւն խնդրեն քնելու կայարանին կից դատարկ ընդարձակ ամբարներուն մէջ: Գայմագամ պէյր, որ տեսած էր այդ սուկալի վիճակը, որուն մինչև ականջը կը հասնէին դժբախտ ժողովուրդին աղեր-

սանքը և վայնասունը, մերժեց ընդունիլ դիմողները և առանց դուռը բանալու անկողնոյն մէջէն սկսաւ պոռալ.

– Ո՛հ, ո՛հ, չեմ ուզեր, օլմագ, օլմագ... (չըլլար):

Աքսորեալները յուսահատ՝ գիշերը անցուցին խոնաւ գետնին վրայ: Առաւօտեան դէմ տեսայ զիրենք: Յուրտէն պաշտպանուելու համար բնագոյով մօտիկ-ցած էին իրարու, սեղմուած, կցուած էին իրարու և մեծ, անկենդան, կարծես միաձոյլ զանգուած մը կը կազմէին: Լռած էին ու ապշած և այնքան քարացած էին իրենց անշարժութեան մէջ, որ կարծես այլ ևս երբէք չէին կարող իրարմէ անջատուիլ:

Արևը բաւական բարձրացած էր, երբ գայմագամ պէյը իր կնոջ և զաւակներուն հետ դուրս եկաւ: Իրենց կրնկերանային երկաթուղիի վերաքննիչ (controleur) յոյն ազգով Գոյնոբուլոս էֆէնտի և իր կինը: Կիները զարդարուած մետաքսեայ հագուստներով՝ խրոխտ, ուրախ, ժպտելով և ծիծաղելով կը յառաջանային և կարծես հարսնիքի կ'երթային: Ասոնք կուգային դէպի հայ քսորեալները: Երբ քահանան տեսաւ, որ պէյը իրենց այցելութեան կուգայ, վազեց դիմաւորելու և ձեռքերը դնելով պատառոտած վերարկուին կուրծքին վրայ, խոնարհեցաւ դէպի գետին ու բարևեց և դողդոջուն շրթունքներով մաղթանք մը մրմնջաց:

Պէյը յայտնեց, թէ կուզէ պտոյտ մը ընել տեղահան ժողովուրդին մէջ: Ողորմելի քահանան շուարուն և խոովուած շտապեց դէպի իր հօտը և սկսաւ գոչել կերկերածայն.

– Ելէ՛ք, ոտքի կանգնեցէ՛ք, գայմագամ պէյը կուգայ ձեզ այցելելու. գոհ դէմքով դիմաւորեցէ՛ք զինքը, մի՛ լաք, մի՛ աղերսէ՛ք, այլ բարևի կեցէ՛ք, գայմագամ պէյը կուգա ձեզ այցելելու:

Սրտադող, յուզում, ակնկալութիւն և վախ կալեկոծեն ժողովուրդը, որ կըսթափի և կըսպասէ:

Թիւրքերը և յոյները շարունակելով խօսակցիլ և ծիծաղիլ, կը մօտենան ժողովուրդին: Քահանային անձկալի դէմքին վրայ փոխն ի փոխ ցաւագին և բռնագրօսիկ ժպիտ մը կերևայ, երբ հիւրերուն կը դառնայ և իր սարսափած նայուածքով կը կշտամբէ քսորեալներէն մէկը կամ միւսը, որ հարկ եղած ակնածութեամբ բարևի չէ կեցած, կքած ըլլալով ոնէ ցաւով կամ տառապանքով:

Գայմագամը կը մտնէ խումբերուն մէջ, կը դիտէ մանուկները, կըսկսի քննել և հարցոյփորձել: Տեղահան ժողովուրդը կը հասկնայ, որ պէյը մանուկ կը փնտռէ և երկիւղի սարսուտ մը կանցնի բոլոր մայրերուն վրայէն և ամեն մէկը կը ջանայ իր զաւակը պահել քղանցքներուն տակ. ձեռքեր կը դողան անձկութենէ, նայուածքներ կը մոլորին, կին մը խելակորոյս կը գոչէ.

– Ո՛վ Աստուած հարցն մերոց, մեր ո՞ր մեղքերուն քաւութեան համար է այս ժամը:

Պէշը կը խոժոռի ու կը կենայ. իր պտոյտը ապարդիւն անցած էր. չէր գտած այն, որ կը փափաքէր: Մանուկներուն ընդդիմութիւնը, իրմէ փախելնին, անոնց վտիտ ու սոգեղ կերպարանքները զինքը կը յուսահատեցնեն:

Քահանան դողահար՝ պէշին վատ տրամադրութենէն անգամ մըն ալ կը խոնարհի, կը բարնէ և կը ջանայ իր սարսափէ ծամածոած դէմքովը ժպտիլ, կուլ տալ արցունքները և ժպտիլ, բայց գայմագամ պէշը գայրացած է և հակառակ քահանային խոնարհ վարմունքին, հակառակ խեղճ ժողովուրդին ակնածական բարնին, անիկա կը բռնէ քահանային կուրծքէն և գայն ցնցելով կը պոռայ.

– Ո՞ւր են լաւ մանուկները, ո՞ւր էք պահեր, խայիներ, ես կուզեմ, հիմակ կուզեմ գեղեցիկ մանուկներ:

Հայհոյանքներու և սպառնալիքներու տարափ մը կիյնայ ժողովուրդին և այլնոր քահանային վրայ, որ այլայլած, գրեթէ խելագար, կը դառնայ և ջանալով գայմագամին գայրոյթի շեշտը կրկնել, կըսէ.

– Ճանրմ, տուէք, երևան բերէք մանուկները, տուէք, ամեն ինչ տուէք, մի բարկացնէք գայմագամ պէշը:

Ամբողջ ժողովուրդը կորոտայ գայրոյթով և անէծքով, իրենց յուսահատութեան թափին մէջ կը մոռնան երկիւղը, գրեթէ կենդանական զգուշութիւնը, որ զիրենք անբան վիճակի վերածած է: Քահանան շուարած՝ մէկ մը կը դառնայ գայմագամին, որ միշտ կը գոռայ, կը դառնայ ժողովուրդին, որուն գայրոյթը հետզհետէ կը մարի աղիողորմ հեծեծանքի մը մէջ: Ծեր կիներ յուսահատական աղօթքներ կը մըմնջեն, մէկը չի համարձակի տեղէն շարժիլ, կարծես ամենքն ալ անօրինակ աղէտի մը կըսպասեն:

Այդ միջոցին յոյնին կիներ գայմագամին այս գայրոյթը տեսնելով, կուգայ դէպ իրեն և փաղաքշական խօսքերով կը ջանայ գայն հանդարտեցնել:

– Մի բարկանաք, պէշս, կըսէ ծեքծեքալով, ես հիմակ գեղեցիկ մանուկները դուրս կը հանեմ, դուք այս հայերուն խորամանկութիւնը չէք գիտեր, թէ ինչ աստիճանի է. ե՛ս կը գտնեմ, միայն թէ դուք հանդարտեցէք:

Իսկ Գոյնոբուլոս էֆէնտին նոյնպէս կը ջանայ պէշը հանդարտեցնել և կըսէ.

– Սպասեցէք մէկ վայրկեան, հիմա տիկինս ձեր փափաքածը կը բերէ:

Տիկին Գոյնոբուլոս կը սողոսկի խումբերու մէջ, ուր խոժոռ, լռին և արցունքոտ դէմքերով կընդունին զինքը: Ամենէն փոքրերն իսկ կարծես զգալով, թէ սպառնալիքը իրենց մատղաշ զլուխներուն վրայ կախուած է, բնագդմամբ լուռ կեցած են, և ոչ մէկ մանկական ճիչ չի բարձրանար այդ ծանր և դաժան ըռպէին:

Յոյն կիներ կը գտնէ վերջապէս ինը տարեկան որբ աղջիկ մը, որուն հայրը թիրքական բանակին մէջ իբրև զինուոր մեռած էր, իսկ մայրը՝ արքայի ճամբուն վրայ: Անիկա նիհար դէմքով, ճերմակ մորթով, սև աչքերով, առատ մազերով սիրուն աղջիկ մըն էր, որ զլուխը ծածկած էր սև եագմայով մը, որ մօրը սուգի եագ-

ման էր: Տխուր էր և սրտաբեկ, բայց իր սիրուն դեմքը հաճելի կերևայ պէյի հանրմին, և որովհետև ոչ մէկ պաշտպան կամ տէր չունէր, զինուորի մը միջոցաւ դրկեցին պէյի տունը:

Աղջիկը մեկնելէ առաջ գլխիկոր նայեցաւ հայ արքայազներու խումբին և կարծես կը վարանէր յառաջանալու. իր տրտում աչքերը կըսէին.

– Ինձ վերջին համբոյր մը տուող չի կա յ...

Դրացիին կինը հասկցաւ որբունկին մտածումը, կանչեց զայն և ըսաւ.

– Եկու, մօրդ տեղ ես համբուրեմ քեզի:

Եւ երկու այտերէն համբուրելով, զայն յանձնեց թշնամիին ձեռքը:

Գայմագամ պէյը քիչ մը հանդարտած էր, և յոյն կինը քաջալերուած՝ մտած էր կրկին խումբերուն մէջ և այս անգամ մանչ մը կը փնտռէր, որովհետև պէյը կը նախընտրէր մանչ մը գնել: Աշխուժով և շտապով յոյն կինը կը փնտռէր աստին անդին և հայ մայրեր աչքերնին գետին կը խոնարհէին, որպէսզի այդ կնոջ աչքերուն չի հանդիպի իրենց նայուածքը: Անհկա վերջապէս արքայազն կնոջ մը քղանցքին ներքնէն հանեց սիրուն մանուկ մը: Մայրը կաղերսէր, կուլար և ձեռքը ոտքը կը համբուրէր յոյն կնոջ: Բայց անհկա ամուլ կին էր և բնութիւնը զրկէր էր զինքը մայրական զգացումէ: Առանց ուշադրութիւն ընելու մօրը արցունքներուն սկսաւ պոռալ.

– Պէ՛յ, պէ՛յ, հոս եկէք, տեսէք ի՛նչ սիրուն է:

Պէյը մօտեցաւ և ժպտեցաւ. իր ճաշակին յարմար էր այս մանկիկը: Հազիւ վեց տարեկան կար, գիրուկ էր, ճերմակ և սևաչուի: Յոյնը ջանքեր կընէր մանուկը խլելու մօրմէն, բայց անհկա գերմարդկային ջանքեր կընէր պահպանելու համար զաւակը և կուրծքին վրայ պինդ սեղմած էր իր մանկիկը: Մօրը այս յուսահատական փարումը զգուանք կարծելով, մանկիկը զուխը կը բարձրացնէր, մօրը երեսները կը համբուրէր և պէյին տուած նիքելէ մեթալիքը ցոյց կուտար:

Յոյն պաշտօնէան կնոջը մօտ եկած էր և երկուքը մէկ պէյին կարծեցնէին և կը գովէին մանուկին գեղեցկութիւնը, առողջութիւնը, լաւութիւնը: Խեղճ մայրը սարսափահար այս անցուդարձէն՝ կուզէր զաւակին հետ փախչիլ և խումբին մէջ անհետանալ, բայց գայմագամի հրամանաւ զինուորները բռնած էին զինքը և փախուստը կարգելէին:

Պէյը տեսնելով մօրը ընդդիմութիւնը, որ հետզհետէ կատաղութեան կը հասնի, ժանտարմաններուն կը հայհոյէ, ոտքով կը զարնէ գետինը, զուխը կը շարժէ զայրոյթով և իր բոլոր կատաղութիւնը քահանային վրայ թափելով, կը պոռայ.

– Անմիջապէս մանուկը պէտք է զինուորներուն յանձնուի, որ տուն տանին:

Փոքրիկին հայրը մէկ կողմ կեցած՝ ապուշի պէս կը դիտէր և կարծես ամեն զգացում կորսնցուցած էր: Քահանան դէպ իրեն եկաւ ու ըսաւ.

– Եթե՞ զաւակդ չի յանձնուի... մտածեցի՞ր, թէ՞ ինչ կուզայ մեր ամենուս գլխուն ... զայնազամ պէր զայրացած է, մտածեցի՞ր, թէ՞ ի՞նչ կը պատահի այս ամենուն...

Կարծես վանելու համար ակներն և ծանր սպառնալիք մը՝ անհկա խաչակնքեց ու կեցաւ:

Հայրը ինքնակորոյս և մեքենաբար մօտեցաւ կնոջը. վախը և հայրական սերը դողդոջուն կը դարձնէին զինքը, բայց բազուկները երկարեց, առաւ մանուկը, որ մայրը վստահեցաւ հօրը իբր աւելի ուժեղ և վստահելի պաշտպանի:

Հայրը մանուկը յանձնեց զինուորներուն: Երբ մայրը իր մարդուն գիրկը դատարկ տեսաւ, հասկցաւ. մազերը կը փեթտէր, երեսները կը ճանկէր և ամուսնոյն վրայ յարձակելով, կը պոռար անդադար.

– Որո՞ւ տուիր զաւակս, ի՞նձ վերադարձուր զաւակս:

Պէշի խումբը իր պտոյտը կատարած էր և մանուկին գինը՝ մէկ մէճիտ վճարելով քահանային, հեռացան: Որբուհին անտէր էր, անոր համար չի վճարեցին, իսկ յոյն կինը զայնազամին արտօնութեամբ վերցուց 15 տարեկան աղջիկ մը ծառայութեան համար:

Պէշի հրամանով ապրանքատար վակոններ յատկացուցած էին տեղահան ժողովուրդին և հրամայուած էր շտապով հեռացնել զիրենք: Շարք շարք կը դիզէին արքորեալները վակոններու մէջ: Որդեկորոյս մայրը տեղէն չէր շարժած, կուլար, կողբար, մէնիներ կըսէր, քարեր կը ժողվէր և մանուկը կորսնցուցած տեղը գերեզմանի ձևով կոյտ մը կազմելով, գլուխը կը զարնէր գետնին և անմխիթար ցաւով կուլար, դէմքը այլափոխուած էր արցունքի առատութենէն և անհկա մարդկային երևոյթը կորսնցուցած էր կարծես: Արքորեալներէն ամեն մէկը այնքան ծանրաբեռնուած էր առանձին տառապանքներով, որ անուշադիր մօրը ցաւին՝ կանցնէին կերթային, իսկ ամուսինը դաշտին ծայրը կեցած յուսահատ, լքուած, աչքերը վայրահակ, չէր համարձակէր կնոջը մօտ երթալ:

Բայց անմխիթար մօր լալիւնը և եղերերգները կը հասնէին մինչև զայնազամին և անհկա անհանգիստ էր այդ յուսահատ աղաղակներէն: Հրամայեց զինուորներուն բռնութեամբ հեռացնել կինը, խեղդել այդ ձայնը, և ժանտարմաները կուզէին զայն տանել, փակել վակոնի մը մէջ: Բայց մայրը կը կռուէր, կաղաչէր ու կը պաղատէր, որպէսզի զինքը չի հեռացնեն և զաւակը դարձնեն իրեն: Կնոջը արցունքներէն ժանտարմաներու մոյկերը գրեթէ ամբողջովին ողողուած էին, բայց պէշին հրամանը պէտք էր կատարել, և սկսան զայն քաշքշելով տանել առանց անոր աղերսանքին լսելու: Հազուստները պատռտեցան և քարերու վրայ քաշքշուելով, ոտքերը և սրունքները արհնտտեցան. այսպէս հասցուցին այդ կինը դէպի գնացքը և գրեթէ անկենդան վիճակի մէջ նետեցին վակոնը:

Պէշի տան մէջ մանուկները կը հագուցնեն, անուշեղէններ կուտան և ամեն ջանք կընեն անոնց սիրտը շահելու: Փոքրիկ մանչուն հազցուցեր էին զարդարուն

լաթեր, բայց աղջիկը մերժեր էր հագուիլ ու զարդարուիլ: «Ես կարմրագոյն հագուստ չեմ ուզեր. ես սև պէտք է հագնիմ», կը պնդէր անիկա:

– Ինչո՞ւ, աղջիկս, կըսէին, զինքը փառաբանելով:

– Իմ հայրս ու մայրս մեռած են, ես սգաւոր եմ:

Ամիս մը անցեր էր և 9 տարեկան որբուհին մագերը միշտ ծածկած էր սև եագմայով: Բոլոր ջանքերը ի դերն էլան: Անոր սրտմտած և տրտում դէմքին վրայ երբէք, բայց երբէք ժպիտը չի երևցաւ: Տխուր և սգաւոր՝ անիկա կը մնար գրեթէ անհաղորդ ուրիշներուն և առանձնացած էր անյաղթելի վիշտին մէջ: Ազդուած այս յամատ տխրութենէն և վախնալով, որ այդ սգաւոր աղջիկը դժբախտութիւն պիտի բերէ իրենց տունին, հրաժարեցան անկէ և ուրիշ հայ արքայազներու խումբի մը հետ ճամբայ հանեցին դեպի Միջագետք:

Հացի բաշխում. Առաջին դիակները Եփրատի վրայ.

70 մանուկներ խեղդամահ:

Նոյն ամսուան մէջ Կիլիկիոյ շրջանէն, Ռում Գալէի կողմերէն հասան 200 հոգիներ խումբ մը հայեր, որոնք Ճալապլուզի մօտ կանգ առին: Պէտք էր նոյն օրը մեկնէին, բայց որովհետև մէկ ու կէս օրէ ի վեր ոսկէ բան կերած չէին, որոշուած էր որ Ճալապլուզ տեղի ունենայ հացի բաշխումը: Գայմագամի հրամանով հապճեպով հաց թխեցին և տակաւին անեփ, կէս խմոր վիճակին մէջ փուռէն հանելով, հացը յանձնեցին ինձ և Ալի Տայիին, որ տանինք ու բաշխենք արքայազներուն: Հացերը լեցուցինք երկու պարկերու մէջ և բերել տալով երկու արքայազն հայեր, բեռուցինք զիրենք ու ճամբայ ելանք: Հակառակ որ ասոնք կը տնքային բեռան ծանրութեան ներքև, անօթութիւնը այնքան կը տանջէր զիրենք, որ երբ մենք քիչ մը կը յառաջանայինք, պարկերէն հաց կը գողնային և կուտէին: Երբ արքայազներու խումբին մօտ հասանք, անմիջապէս կարգադրեցինք, որ իրենց մօտ եղող քահանան և մեծերէն մէկը մեզ իմացընեն իւրաքանչիւր ընտանիքի անդամներուն թիւը, որպէսզի անոր համեմատ արդար բաշխում ընենք: Ես և Ալի Տային մէկ մէկ պարկ բռնած՝ նստած էինք, բայց անսուտ բազմութիւնը թափուեցաւ մեր վրայ և ոսկէ կանոնաւորութիւն պահել անկարելի եղաւ: Ես սկսայ նախ կիներուն տալ, բայց այրերը և ուժեղները ձեռքերնէն կը յափշտակեն: Մարդեր չէին կարծես, այլ անօթութենէ զայրացած անբաններ, որոնք կորսնցուցեր էին մարդկային զգացումներու ամեն հետք: Ակնթարթի մը մէջ կերան, լափեցին և մենք պարկերը թողլով, հազիւ թէ յաջողեցանք փախիլ. մանուկներ, հիւանդներ, յղի

կիներ անօթի մնացին: Միջոց մը տեսայ, որ վտիտ երեխաներ մատերնուն ծայրը թուքով կը թրջէին և կը հաւաքէին գետինը ինկած ամենայետին փշրանքները:

Կիլիկիոյ շրջաններու մասին միշտ տեղեկութիւն կունենայինք և կը հետևէինք անցուդարձերուն, բայց Հայաստանէն բոլորովին լուր չունէինք: Ահա թէ ինչպէս առաջին հանդիպումը ունեցանք հայաստանցիներու հետ:

Մայիս մէկի առաւօտուն կանուխ ընկերներով ուղեցինք Եփրատի եզերքը երթալ: Այդ եղանակին շատ գեղեցիկ է մեր շրջանը, կարծես ամբողջովին ծաղկատան մըն է: Վայրի ծաղիկներու բուրումը գաղջ օդի ալիքներով կը ծածանէր մթնոլորտին մէջ: Երբ դէպի գետը կուգայինք, տեսանք, որ հեռուէն սև սև կոյտեր կը ծածանին Եփրատի ջուրերուն վրայ: Արաբներ, զինուորներ խումբ խումբ կեցած և հետաքրքրուած կը դիտէին այդ կոյտերը. յանկարծ աղաղակ մը բարձրացաւ.

– Հայեր են, հայեր ...

Մօտեցայ խումբի մը և թիւք զինուորի մը հարցուցի.

– Ի՞նչ են ասոնք:

– Հէ՛, խայիննէ՛ր, պատասխանեց, ձեր հայերու դիակներն են, չէք զիտեր, թէ ինչէ՛ր պատահեր են վերերը:

Չէինք ուզեր հաւատալ և մօտենալով գետափին, սկսանք շտապել հոսանքն ի վեր դէպի երևցող կոյտերը:

Գետափը խոռոչի մը մէջ տեսանք, որ զինուոր մը ջուրի եզրը նստած՝ դիակի մը վրայէն կը հանէ վերարկուն, լաթերը, կօշիկները:

Դարձեալ չուղեցինք հաւատալ, թէ այդ դիակները հայու դիակներ են, և կը խորհէինք, որ թերևս պատերազմի հետևանքով ինկող զինուորներու մարմիններ են: Խմբուեցանք թիւք զինուորին մօտ և ուղելով ստուգել, մօտեցանք դիակին: Զինուորը կողոպտած վերարկուին գրպանները կորոնէր, երբ տետրակ մը հանեց: Անմիջապէս առի ձեռքէն. ջուրը անընթեռնելի դարձուցած էր գիրերը: Այսքանը միայն կրցայ հասկնալ, որ ադիկա Մամսադ<sup>(1)</sup> զիւղացի նպարավաճառի մը օրատետրն էր:

Սոսկումը և արհաւիրքը մեզ պատեց. ուրեմն իրաւ հայեր էին: Դիակները կիջնային հոսանքն ի վար 5 կամ 10 հոգի ձեռք ձեռքի, ոտք ոտքի կապուած. հազուադէպ էին առանձին դիակները, որոնք նոյնպէս կապկպուած էին:

Յորեկը լոյս աչքով ակնապիշ կը դիտէինք: Մինչև մայիս 5-ը անցան օրական 150–200 դիակ առանց հաշուելու գիշերն անցածները: Այսպէս տեղ մինչև մայիս 28–29-ը, հետզհետէ օրական թիւր նուազելով:

Իրար կապուած դիակներու կոյտերը կը սահէին, կանցնէին անդադար: Կային նաև կանանց դիակներ, որոնց երկու բազուկներուն տակ և սրունքներուն մէջ մէկ մէկ մանուկ կապուած էին: Կիները բոլորովին մերկ էին և դեռատի, պառաւներ չի կային բնաւ:

Նոյն այդ խոռոչին մէջ հանդիպեցայ մօտ 14 տարեկան աղջիկան մը դիակին: Հեռուէն որ կուգար, սև կոյտ մը կերևար միայն: Երբ մեր կողմը հասաւ, ալիքը զայն նետեց ափունքը, ուր յորձանքին մէջ պահ մը դառնալով, մնաց: Առաջի պահուն ուռած մասեր միայն կերևային. փորը սև և գորշ և ստինքները ուռած տիկերու նման. ոտքերը ջուրին մէջ կախուած էին և պղնձագոյն ազդրերը կը կրէին վերքերու հետքեր: Ոտքերէն կախուած էր պատտոտած ճերմակեղէնը, որը ցեխով և արիւնով պղծուած էր: Ձեռքերը քնքուշ էին և կապուած էին հաստ պարանով մը. դէմքը կորսուած էր ջուրին մէջ, բայց առատ ոսկեգոյն մազերը կը ծփային ջուրին վրայ:

Ես և ուրիշ հայ պաշտօնեայ մը նոր կամուրջը զացեր էինք: Այնտեղ տեսանք հետևեալը. կամուրջին ստորոտը, ուր պահապան զինուորներ կը կենան, այդ նոյն պահապանները շինած էին երկար երկայթէ ձողեր, որոնց ծայրը կեռ մը կար, որով դիակները կը քաշէին հագուստները կողոպտելու համար: Այդ պահուն զինուոր մը կնոջ դիակ մը կը քաշէր, բերաւ ջրի եզերքը. կնոջ մարմինը կրի նման ճերմակած էր և սև խոշոր արատներ կը կրէր. մարմինը ձևափոխուած լիկած էր գրեթէ և դիմագծերը անհետացած էին. այնքան փտտած էր այլևս, որ ձողը հազիւ թէ կը դպցնէր, անիկա կը խրուէր մարմինին մէջ: Այդպիսի դիակի մը ձեռքէն զինուորը առաւ արծաթ մատանին:

Նոյն կամուրջին ներքև երկրաչափի օգնական երիտասարդ ֆրանսիացի մը, որ յոյնի անուան ներքև կը մնար, արձակուրդի ժամուն կուգայ ձեռքը լուսլու Եփրատի մէջ, երբ յանկարծ թելին բան մը կը փաթտուի և սուկումով վեր կը քաշէ. 14–15 տարեկան աղջիկան դիակ մըն էր, որ կը ծանրանար թնէն: Երիտասարդը ձեռքը կազատէ մազերէն, բայց այնտեղ գտնուող քիւրդեր կուգան աղջիկան դիակը կը յափշտակեն: Անիկա տակաւին մատղաշ էր և գեղեցիկ. դիակը թարմ էր և չէր ձևափոխուած բնաւ. ոտքին կը կրէր կապուած քար մը, որով դանդաղօրէն և ջուրին մէջէն կը յառաջանար առանց մակերեսը բարձրանալու:

Դիտած էինք, որ ճալապլուզէն քիչ հեռու անսովոր երևոյթ մը յայտնուած էր. երամներով ագռաւներ և շուներու ռհմակներ կերնէին, որոնց կոնչիւնը, ոռնոցը և լալիւնը երկարօրէն կը լսուէր իրիկնամուտի ժամերուն: Հետաքրքրուած գացինք այն կողմերը տեսնելու, թէ ինչ կայ: Տակաւին ճանապարհին վրայ՝ դաշտերուն

մէջ տեսանք մարդկային մարմինի բեկորներ, ձեռքեր, կէս յօշոտուած գանգեր և այլն: Ո՞վքեր էին ասոնք, ո՞րկէ եկած էին, չի կրցանք հասկնալ: Տեսանք, որ խոշոր շուներ դէպի իրենց որջերը կը քաշէին դիակներու բեկորներ իրենց ձագերուն համար: Իսկ գետեզրը այդ բեկորները այնքան առատ էին, որ շուներու խումբեր և ազոսներու, վայրի զանազան թռչուններու երամներ, իրարու առանց վնասելու, անվրդով և թառած իրենց որսերուն վրայ դունչերնին խրած դիակներու՝ մէջ անընդհատ կը լափէին:

Գերմանական երկաթուղիի Հալէպի կեդրոնական պիւրօյի տնօրէնը և երկաթուղիի գիծի հայթայթիչը, որ գուիցերացի էր, Գարատաղի անտառը մեկնեցաւ փայտ բերել տալու համար, բայց չի կարողացաւ Եփրատի եզերքէն իր ճամբան շարունակել, որովհետև Պերէճիքէ մինչև Գարատաղ գետին երկու եզերքը դիզուած դիակները այնպիսի նեխութիւն յառաջ կը բերէին և անոնց երևոյթը այնպէս խոր կերպով ջիղերը քայքայէր էին, որ սարսափով փախաւ, վերադարձաւ Հալէպ և մահացու կերպով հիւանդացաւ:

Երբ Ատիամանի, Սամսատի և շրջակայ գիւղերու հայերը տեղահան ըրած են, կիները դրկուած են Արաբ Բունարի կայարանը և այրերն ալ կապելով իրարու, նետած են գետը: Մայիսի վերջերը այդ վայրերու կիները գնացքով, 40 վակոնով, իւրաքանչիւրին մէջ 60-ական հոգի, կը դրկուէին դէպի Հալէպ: Երբ կանցնէին Եփրատի առժամանակեայ կամուրջին վրայէն, այդ դժբաղդները վակոնի պատուհաններէն կը տեսնեն խումբ մը դիակներ գետին վրայ, որոնց հագուստները և տարազը նման էր իրենց գիւղացիների հագուստներուն: Հարս մը, որ գնացքին մէջ նոր ծնած էր իր անդրանիկ զաւակը և որ իր հարստութեան և գեղեցկութեան պատճառաւ անլուր տանջանքներու մատնուած էր ճամբուն վրայ և կէս խելագար վիճակի մէջ էր, կը կարծէ ճանչնալ իր ամուսինը դիակներու այդ խումբին մէջ: Բոլոր կիները կը ճչեն և կուգեն գետը թափուիլ. սիրական անուններ կադադակեն, կը պոռան, կը հեծեծեն, և իրենց ձայներն այնքան բարձր կը հնչեն, որ կը խափանեն վայրաշարժին սուլոցը, որ անդադար կը սուլէր:

Նոր հարսը խելակորոյս վիճակի մէջ կուգէ գետ նետուիլ և չի յաջողելով նեղ պատուհանէն դուրս ցատկել, նորածին մանուկը կը նետէ դէպի իր կարծեցեայ ամուսինը, որ իյնալով քարերու վրայ կը ջախջախուի անմիջապէս:

Թիրք մը, պատրուակելով որ մանուկները պիտի տանի, լաւ մարդոց խնամքներու պիտի յանձնէ, Մամսաղի գիւղացիներէն և թիրքերու ձեռք հաւաքուած մանուկներէն 70 հոգի կառնէ, մակոյկ մը կը լեցնէ և կըսէ թէ Եփրատի վրայով ճալապլուզ պիտի բերէ՝ անկէ Հալէպ անցնելու համար:

Երբ կը հասնին Միւրիւրկիճի (Մուրք Փրկիչ) մօտ, ուր ջրվեժ մը կայ և մեծ յորձանք մը կը կազմէ, և որ վերջին ծայր վտանգաւոր է ամեն մակոյկներու համար, փայտ մը կը կոտորէ մակոյկէն, ինքը կը նետուի ջուրը և լողալով կը հասնի գետեզրը: Մանուկներու մակոյկը անտէր և առանց դէկի կը հասնի յորձանքին, կը շրջի անմիջապէս, և սարսափահար մանուկները ցիր ու ցան պահ մը կը դառնան յորձանքին մէջ: Կէս ժամ չանցած 70 փոքրիկ դիակները կուղևորուին հոսանքն ի վար: Թիրքը գետեզրը կեցած կը հսկէ և կսպասէ, մինչև որ վերջին մանուկն անհետանայ, ուրկէ ետքը կը դառնայ իր գիւղը:

Մեր շրջանի հայերը մատնուած էին հոգեկան անպատմելի չարչարանքի: Երբ դիակներ կերևային գետին վրայ, գործ և այլն կը ձգէին և կը փախէին, որպէսզի չի տեսնան: Ու անդադար կանցնէին խեղդամահներու սև կոյտերը, որոնք փոխանակ թիրքերուն գուրթը շարժելու կը գրգռէին իրենց ատելութիւնը: Պերէճիքի թիրքերը իրենց սրճարաններուն մէջ նստած՝ լուտանքներ կը թափէին անցնող դիակներուն վրայ կամ կը հեզնէին ու կը ծաղրէին: Տղաքը քար կը նետէին ու նախատական խօսքերով գետափէն կը հետևէին անոնց ընթացքին, իսկ կիները կը գանգատէին, որ այդ պիղծ դիակները Եփրատի ջուրերը աղտոտած են և ամեն կարգի անէծքներ ու հայհոյութիւններ կուղղէին հայերուն:

Արաբները միայն կը խղճային ու կը գանգատէին: Իրենց մեծամեծները զայրացած էին այս անարդար անխղճութիւններուն վրայ, և մանաւանդ 70 մանուկներու մահը մեծ գրգռութիւն յառաջ բերաւ իրենց մէջ թիրքերու դէմ: Բուռն կերպով բողոքեցին Հալէպի կառավարութեան և 70 մանուկներու ոճրագործը ձերբակալելով, յանձնեցին դատարան, որուն կախաաղան բարձրացուց արաբներու ստիպումին վրայ:

Շատ տեղ զիս իսլամ կարծելով, թիրքերը անվերապահ կերպով կը խօսէին այս անցուդարձերու մասին: Իրենց ընդհանուր կարծիքը այս էր.

«Աստուած հայը ստեղծած է դուրպանի (զոհ) համար, կիները՝ զուարճութեան համար, բայց մանուկները սպաննելը իրօք բարբարոսութիւն է»:

Հայաստանցի հայերու տեղահանութենէն դրուագներ.

*Տիգրանակերտ. Մարտին. Ռասուլեյնի մէջ. Թէլէպիսադի մէջ.  
Եդեսիայի մէջ. Արաբ Բունար:*

*Տիգրանակերտցի քանի մը շատ հարուստ սեղանաւորներ կը յաջողին, ահագին կաշառք տալով, քաղաքէն մեկնիլ: Բայց ճանապարհին զիրենք կը բաժնեն իրենց ընտանիքներէն և Սներեկի ու Եդեսիոյ մէջտեղ կը սպաննեն զիրենք: Իրենց կիները ու աջիկները, մօտ 200 հոգի, ապահով տեղ կը հասնեն և կը պատմեն հետևեալ դէպքերը, որոնց հետևած են օրը օրին:*

*Առաջին անգամ կառավարութիւնը ձերբակալելով Տիգրանակերտի և շրջակայքի հայերէն 650 հոգի, Տիգրիսի վրայէն լաստերով դրկած է դէպի Մուսուլ, բայց քաղաքէն քիչ մը հեռանալէ ետքը ժանտարմաները կը պատռեն լաստերու տիկերը, և աքտորեալները ամբողջովին կընկղմին Տիգրիսի մէջ: Անոնք, որ կը կարողանան լողալով գետեզրը հասնել, այնտեղ գտնուող ժանտարմաներէն հրացանագարկ կըլլան:*

*Այս դէպքէն ետքը Տիգրանակերտի ժողովուրդէն այրերը իրենց դիրքին և հարստութեան կարգով մաս մաս կը հեռացնեն քաղաքէն և զանոնք ողջ ողջ թաղելով ցորենի հորերու մէջ, վրաներնին կը փակեն քարերով, ուր և շնչահեղձ կը մեռնին: Մաս մըն ալ Տիգրիսի եզերքը խեղդամահ ընելով, կը ջնջեն, և մնացեալը, այր և կին միասին, խումբ խումբ Մարտինի գծով կը դրկեն դէպի Ռասուլեյն: Ճամբան այրերը կիներէն բաժնելով, մինչև 6 տարեկան տղաքը ճանապարհին մօտ ձորերու մէջ տանելով, կը կոտորեն: Կիները տակաւին Մարտին չի հասած՝ յարձակում կը կրեն չեչեններու կողմէ, որոնք զատելով գեղեցիկ աղջիկները, չարաչար կը բռնաբարեն, իսկ քիւրդերը անընդհատ կը կողոպտեն զիրենք: Այրերու կոտորածի միջոցին կիները մէկ կողմ կեցուցած էին, և իրենց կը հասնէին ձորերուն մէջ կոտորուող մարդոց օրհասական աղաղակները: Տիգրանակերտի և շրջակայ գիւղերու ժողովուրդին կոտորածը այնքան սաստիկ կըլլայ, որ Տիգրանակերտէն մինչև Մարտին ձորերը դիակներով լիքն էին և Սներեկէն մինչև Եդեսիա ճամբուն երկու կողմը դիակներով ծածկուած էին: Ահա այսպէս է, որ կոտորուած, կողոպտուած, նախատուած պառաւ կիներու խղճալի խումբ մըն է միայն, որ Տիգրանակերտի բարգաւաճ և բազմահայ շրջանէն կը հասնի Ռասուլեյն:*

*Թիւրք զինուոր մը, որ Վանայ կոիւներուն մէջ վիրաւորուած էր և միննոյն ճամբէն անցնելով հասած էր Ճալապուզ, կը պատմէր հետևեալը.*

*Պիթլիսի մէջ տեսայ, որ հայ վաճառականներուն կռնակը բեռցուցած էին վաճառականական տօմարներ և այդպէս զիրենք կը փոխադրէին Մղերդ: Հայ զինուորներ, որ բերած էին Էրզրումէն և կաշիսացնէին բերդի մը շինութեան, գործը աւարտելէն առաջ պիթլիսցի վաճառականներուն հետ կը վերադարձնեն Պիթլիս*

և հոն Շակ քարի՝) մօտ թէ հայ զինուորները և թէ վաճառականները յարձակում կը կրեն տեղւոյն քիւրդերէն, որոնք կը կողոպտեն զիրենք և յետոյ կը սպաննեն:

Պիթլիս – Մղերդ ճանապարհին հայ զիւղի մը մէջ տեսայ հայ կին մը, որ ոտքերէն կախուած էր. գլուխը հողէն մէկ մէթը բարձր էր. երեք մատղաշ զաւակները ոտքերնուն գամած էին գետնին. տակաւին ողջ էին և կը ձգտէին իրարու հասնիլ: Թիւրք զինուորականներ քիչ հեռու կեցած էին և նշանառութեան փորձեր կընէին ձօճուող կնոջ վրայ, գնդակ արձակելով աչքերուն և ծիծերուն:

Կնոջ յանցանքը այն էր, որ տեղահանութենէ խուսափելու համար իր զաւակներուն հետ պահուրտած էր:

Մարտին. Տիգրանակերտէն անմիջապէս ետքը Մէմսուհ պէյի հսկողութեան ներքն կը սկսի Մարտինի տեղահանութիւնը և կոտորածը: Այրերը կը ժողովեն, պատրուակելով, թէ անոնք պիտի յատկացուին ճանապարհի նորոգութեան գործերու, բայց անմիջապէս որ քաղաքէն դուրս կը հանեն, Տիգրանակերտի և Մարտինի ձորերուն մէջ կը կոտորեն զիրենք:

Պաղտատի մէջ թիւրք զինուորական մը ինձ կը պատմէր, թէ բոլոր ձորերը լեցուն էին դիակներով և գրեթէ անոնց խորութեան կէտը ծածկուած էր. դաշունահար մարդոցմէ հոսած արիւնը այնքան առատ էր, որ ջուրի պէս կը հոսէր:

Մարտինի կիները և աղջիկները ենթարկուեցան տիգրանակերտցիներու վիճակին: Չեչենները կը զատէին գեղեցիկները, կը կողոպտէին ու կը դրկէին Ռասուլէյն: Այս շրջանին մէջ ասորիներու մէկ մասն ալ հայերուն վիճակին ենթարկուեցաւ: Ասորի կին մը անհիծելով հայերը, որ պատճառ դարձան իրենց անբաղդութեան, պատմեց հետևեալը.

Մարտինի մէջ տեղահանութեան հրամանը սուկում յառաջ բերաւ, որովհետև Տիգրանակերտի՝ կողմերէն կիներու խումբեր ցիր ու ցան կը հասնէին և իրենց երևոյթը, մանաւանդ ողբ ու լացը, կը յայտնէր, թէ ինչ կը սպասէր արքայականներուն: Միւս կողմանէ տակաւին ժողովուրդը չի մեկնած՝ ժանտարմաները, չեչենները, քիւրդերը կը մտնէին տուները, կը կողոպտէին, կը հարուածէին, կը բռնաբարէին: Շատերը խելագարուեցան ու գոռալով, աղաղակելով կանցնէին փողոցներէն, որոնք մեծ պագարի մը փոխուած էին: Ամեն կողմ կարասիներ, գորգեր թափուած, դիզուած. զանազան գոյքեր կոտորատուած, ոտքերու տակ կը ջախջախուէին յախճապակիէ և այլ դիւրաբեկ անօթներ, հայելիներ, ու այս բոլորին մէջ աստին-անդին ինկած դիակներ, ամենուն աչքին առաջ բռնաբարումներ. յայտնի և պարկեշտ ընտանիքներու աղջիկներ կենթարկուէին յետին նախատիքներու և տեղ-տեղ հաւաքած ըլլալով ամենէն գեղեցիկները ու մատղաշները, կը ծախուէին շրջակայքէն եկած իսլամներու: Տիգրանակերտցի և մարտինցի 300-ի չափ հարուստի աղջիկներ, որոնք մեծ ժառանգորդներ էին, չեչեններու կողմէ ծախուեցան՝ իւրաքանչիւրը 200-էն 300 ոսկիի:

*Տիգրանակերտի, Մարտինի, Սդերդի, Խարբերդի տեղահանությունը կազմակերպած էր Խալիլ պեյ, որ Պոլսէն եկած էր յատուկ այս պաշտօնով: Անիկա կազմած էր առնաուղներէ, չեչեններէ, չերքեզներէ չեթաներ, որոնց պաշտօնն էր հայերու բնաջնջումը: Ու այդ բոլորը մինչև գործադրութեան օրը գաղտնի պահուած է թէ հայ, թէ թիւրք ժողովուրդէն: Այս շրջաններու տեղահանությունը եղած է ամենէն բարբարոս կերպով. այրերը կոտորուած են և կիներն ու երեխաները ենթարկուած են ամեն կարգի չարչարանքներու:*

*Ռասուլէյնի մէջ. Իմ բարեկամս՝ երկաթուղիի շինութեանց պաշտօնեայ, որ իր պաշտօնին բերումով շարունակ կերթար Ռասուլէյն և կը վերադառնար, պատմեց հետևեալը.*

*Առաջին անգամ որ Ռասուլէյն հասայ, տեսայ կայարանին և գիծին երկու կողմերը ընդարձակ տարածութեան մը վրայ խոնուած հազարաւոր հոգիներ՝ կին և երեխայ: Չեչեններ, չերքեզներ, թիւրք զինուորներ և զինուորականներ ազատ կերպով կը մտնէին այդ խումբերուն մէջ և ամեն անգամուն իրենց հետ դուրս կը բերէին աղջիկներ, գոյքեր, զարդեղէն, դրամ և այլն: Տեղեկացայ, որ ասոնք Տիգրանակերտի, Մարտինի և մասամբ Խարբերդի տեղահան եղած ժողովուրդի բեկորներ են: Սկիզբները տակաւին բաւական լաւ հագուած էին, բայց շաբաթուան մը երթնեկի ընթացքիս հետզհետէ խումբը ստուարացաւ և իրենց վիճակը վատացաւ. թշուառությունը, անօթությունը, հոգեկան և ֆիզիքական տանջանքները այլակերպ դարձուցին զիրենք: Մուրացկանի վիճակին վերածուած՝ անոնք կը թափառէին ամեն կողմ, կը թափուէին գնացքին վրայ և այնքան կորսնցուցած էին ինքզինքնին պաշտպանելու բնագոյր, որ անզգուշութեամբ կը նետուէին անիւներուն ներքև: Ամեն անգամում կատախումբը մանուկներ ձգմելով, արիւնոտած կը վերադառնար: Քանի մը անգամ գաղտնաբար մտայ տարագիր հայերու խումբերու մէջ և զգացի իրենց հոգեվարքը: Անօթի, դժգունած, վտիտ, կէս դիակներու վերածուած՝ անոնք աղերսագին կտոր մը հաց կուզէին: Ամեն անգամուն հետս կը բերէի հինգ պարկ ալիւր և կը բաշխէի հապճեպով, բայց իրենց վրայ հսկող զինուորները և ժանտարմաները, երբ ալիւր կը տեսնէին հայերու ձեռք, կը խլէին և կը տանէին ուրիշներու ծախելու: Մահացու յուսահատությունը այնքան տիրապետած էր իրենց, որ կիներ ինքզինքնին գնացքին ներքև կը նետէին. թիւրք զինուորականները ոչ միայն ունէ արգելք չէին դնէր այս ինքնասպանություններուն, այլ մօտ կեցած կը նայէին և կը ծիծաղէին: Տեսայ նոյնիսկ, որ կիներ ու քանի մը մանուկներ շարելով գիծին վրայ, վակոն մը կը գլտորցնէին և բարձրաձայն կը ծիծաղէին անոնց ջախջախուիլը, վիրաւորուիլը և ցաւի ազդեցութեան տակ անոնց գալարուիլը տեսնելով:*

*Անօթությունը, տաքը, իրենց հսկողներուն անխիղճ վերաբերմունքը այնպիսի անտանելի կեանք մը ստեղծած էր, որ արքայազներուն հոգեվարքի հեծեծանք-*

ները հասան մինչև Հալէպ և վրդովմունք յառաջ բերին ոչ - թիրք ժողովուրդներու մէջ: Գայթակղութեան առաջքը առնելու համար կառավարութիւնը որոշեց զիրենք հեռացնել և փոխադրել մինչև Մծբին:

Բարեկամս, խորհելով մինչև ասոնց մեկնումը գոնէ որոշ թիւով մանուկներ ազատել, հետևեալ հնարքին դիմեց: Իր հետ կունենար մեծ զամբիւղներ, որոնցով զանազան վայրերէ հնդկահաւեր կը փոխադրէր Հալէպ: Կը մտածէ այդ զամբիւղները օգտագործել և ամեն օր դաշտերէն հայ մանուկներ ժողովելով, կը դնէ զամբիւղներուն մէջ և կը բերէ Հալէպ: Ահա թէ ինչպէս կը պատմէր իր ազատարարի պաշտօնի միջոցին կրած տպաւորութիւնները.

Մօտեցայ խումբի մը. ամենքն ալ պառկած էին երեսնին գետնին դարձուցած արևին տաքութենէն պաշտպանուելու համար. անշարժ էին և անշշուկ. կարծես գերեզմանատան մը կոյտերն էին իրարու քով, ցիր ու ցան շարուած: Երեխայի մը մօտ գացի և ուզեցի արթնցնել, բայց երբ դպայ անոր, չըսթափեցաւ. խորհելով որ քնած է, գետնէն վերցուցի զինքը և տեսայ, որ սիրուն մանչ մըն էր և անմիջապէս նշմարեցի, որ իր կիսաբաց աչքերը կը մարէին. մանուկը իր վերջին շունչը կը փչէր. սարսափած թողուցի զայն գետինը և խելագարի պէս սկսայ վազել, փախիլ այդ շարաբաստիկ երևոյթէն: Հոգիս այնքան խորապէս վրդովուած էր, որ իրականութեան զգացումը կորսնցուցի և ժամերով մնացի ապուշ կտրած, ակնապիշ առանց բան մը տեսնելու: Երբ սթափեցայ, տեսայ յղի կին մը, որ երկու մանուկ տուր ձգած ձեռքերս կը համբուրէր և կաղերսէր, որ կտոր մը հաց տամ իրեն:

Արևը բաւական իջած էր և միջօրէի կիզիչ տաքը մեղմացած էր. աչքերս դարձուցի դէպի այն խումբը, տեսայ որ շատերը արթնցած էին և կը խլրտէին իրենց տեղոյն վրայ: Ոտքի ելայ ու կրկին գացի իրենց մօտ: Անտուաղութենէ մոլորուած կիներ դաշտին մէջ խոտ կը փնտռէին ուտելու, բայց ամեն ինչ չորցած էր այդ աւազուտ և կիզիչ տարածութեան վրայ. իսկ մանուկները, որոնք դիակնային երևոյթ ունէին, այնքան ուժասպառ էին, որ իրենց ձեռքի տակի չորցած խոտերու շիւղերը կը շօշափէին և ուժ չունէին կարծր հողէն քաշելու, հանելու:

Յաջորդ անգամուն հետս հաց բերի, երբ ցոյց կուտայի հացը, որպէսզի տեսնան և դէպի ինձ գան, իրենց մարած աչքերը տենդային, գրեթէ խելագարի փայլ մը կառնէին, կը սնեռէին ինձ, ձեռքիս հացը, կը փորձէին ելնել վազել դէպի ինձ, բայց կիյնային կարծր գետնին վրայ և դէմքերնին ու ձեռքերնին կարիւնտէին: Երբ կը մօտենայի հացը մանուկի մը տալու, ոչ թէ կառնէին, այլ կը յափշտակէին, ձեռքերս ճանկրտելով: Անոնք կորսնցուցած էին մանկական ամեն շնորհ և երևոյթ. կնճռոտած դէմքեր ունէին, դաժան նայուածքով և անասնային արտայայտութիւնով. չէին կարող խօսիլ, այլ երբ ուզէին գոչել, տեսակ մը հնքոտ և բեկ-բեկ կոկորդային աղաղակ կարձակէին, որ ոչ մէկ մարդկային վանկի կը նմանէր: Անգամ մը մօտեցայ փոքրիկի մը, որ տեսակ մը կենդանութիւն պահած էր իր դէմ-

քին վրայ, համոզեցի որ հետս գայ. ակնապիշ կը նայէր ինձ առանց պատասխանելու, բայց զգացի որ հասկցաւ. այն ատեն յորդորեցի, որ իր շուրջի մանկիկներն ալ հետը բերէ. բայց անհկա տարօրինակ շարժումով մը մէկիկ մէկիկ ցոյց տուաւ զանոնք: Աւելի մօտեցայ և տեսայ, որ մեռած էին ու ինքքը մինակը նստած էր դիակներու մէջ:

Այդ պաշտօնեան իր հնդկահաւի զամբիւղներով 40–50 երեխայ բերաւ Հալէպ, որոնք որդեգրուեցան տեղւոյն հայ ընտանիքներու կողմէ:

Ռասուլէյնէն հայերը փոխադրուեցան Մծրին և մնացին միայն դիակները, որոնք հայերու միջոցաւ դիզել տուեր էին և որոնցմով բլուր մը կազմուած էր: Այսպէս մնացին անթաղ և տարրալուծուեցան ու չքացան արևին կիզիչ ճառագայթներուն ներքև:

Թէլէպիադի մէջ. Երկաթուղիի ընկերութեան բժիշկ արաբ Խալէտ պէյ պատմեց ինձ Թէլէպիադի մէջ կանգ առած հայերու մասին: Գնացքով կերթար, երբ ճանապարհին կը տեսնայ գիծին վրայ ինկած մանուկներ. գնացքը կեցնել կուտայ և մօտենալով կը տեսնէ, որ 6 երեխաներէն 1-ը միայն տակաւին կենդանի է. մնացեալը արդէն իսկ մեռած էին. մէկ կողմ կառնեն փոքրիկ դիակները և ինքքը վերցնելով միակ ողջ մնացած տղան, կը վերադառնայ վակոն: Ուշիմ երեխայ մըն էր և ուտելիքով բաւական կազդուրուելէ ետքը կը պատմէ, թէ ինչպէս այդտեղ կը գտնուէին: Աքսորեալներու իրենց խումբը կանցնէր ձորերու և լեռներու մէջերէն, երբ յանկարծ իր մայրը կը կորսնցնէ. զայն փնտռելու համար կը խուսափի խումբէն և կը սկսի թափառիլ: Երկու օր աստին անդին մոլորելէ ետքը կը լսէ գնացքին սուլոցը և կու գայ այդ ուղղութեան: Գիծին մօտիկ կը գտնէ միւս մանուկները, որոնք իրեն պէս 6 – 7 տարեկան երեխաներ էին, ճամբանին կորսնցուցած, անօթի, անտէր:

– Երբ իրարու հանդիպեցաք, ո՞րք էին ամենքը, կը հարցնէ բժիշկը:

– Առաւօտուն տակաւին իրարու հետ կը խօսէինք, յետոյ մէկիկ մէկիկ լռեցին ու ինկան, կը պատասխանէ երեխան:

Ժողովուրդը, որ կը գտնուէր Թէլէպիադի մէջ, բեկորներն էին այն հայերուն, որոնք տեղահան եղած էին Խարբերդէն, Սևերեկէն, Չնքուշէն, Ջերմուկէն: Մօտաւորապէս 400 հոգի էին և դիզուած էին պզտիկ խանի մը մէջ, ուր հազիւ թէ 50 – 60 հոգիի տեղ կրնար ըլլալ: Ստիպուած էին ոտքի վրայ մնալ և կամ իրարու վրայ կը նստէին: Որովհետև կարգիլէին ժողովուրդին դուրս ելնել բնական պէտքերու համար, անոնք գրեթէ շաղախուած էին կեղտով, աղբով: Գարշահոտութիւնը, անմաքրութիւնը մահացու հետևանքներ կունենային, ամեն կարգի ցաւերով կը տանջէին արքայները և օրական բազմաթիւ մահեր կը պատահէին խանին մէջ. մեռնողները կը հակէին ժողովուրդին վրայ և որովհետև տեղ չի կար իյնալու, երբեմն անոնց խիտ շարքին մէջ երկար ատեն կանգուն կը մնային. շուրջը գտնու-

ւող ողջերը ստիպուած էին կամ մեռելին վրայ նստիլ, կամ զայն գիրկերնին առնել, որովհետև տեղերնուն շարժելու ոչ մէկ հնարք չի կար: Հակառակ այս ծայրայեղ վիճակին, հակառակ անօթի, կիսամեռ, մերկ, աղտոտութեանց և նեխութեանց մէջ կորսուած ըլլալնուն՝ անոնք խաղալիք դարձած էին ժանտարմաներուն, որոնք գիշերանց կը մտնէին հոն, կը փորձէին կողոպտել, կը փնտռէին ու կը պահանջէին զարդեղէններ ու բան չի գտնալով, ժողովուրդը կը մատնէին ամեն կարգի չարչարանքներու և անարգանքներու:

Թէլէպիադէն մինչև Արաբ Բունար երկաթուղիի գիծը ամբողջովին հայ կնոջ և երեխայի արիւնով ողողուած է և գիծին երկու կողմը գրեթէ անընդհատ կը հանդիպէր գնացքին ներքև ջախջախուած դիակներու, որովհետև գիշերային փոխադրութիւններու միջոցին թիւրք ժանտարմաները կը նստեցնէին իրենց յանձնուած ժողովուրդը գիծին վրայ: Հայաստանի խորերէն եկած խեղճերը չեն գիտեր, թէ գիծը ի նչ է, գաղափար չունին գնացքի մասին և երբ յոգնաբեկ և սպառած տարածուած են գիծերուն վրայ և կը քնեն, կառախումբը յանկարծակի կը բերէ գիրենք: Ամեն անգամուն գնացքը կըստիպուէր կենալ դիակներու վրայ. ջախջախուած մարմինները մէկ մէկ կը շարտէին մէկ կողմ և միւսներուն կըստիպէին հեռանալ ու ճամբան բանալ:

Անէզի արաբ ցեղը մեծ գումարներ ստանալով Եդեսիայի հայերէն, եկած էր Թէլէպիադի հայերուն մէկ մասը ազատել: Հսկիչ ժանտարմաներու հետ կռիւի բռնուելով, շատ հայեր ոտնակոխ կըլլան և 100-ի չափ կիներ զոհ կերթան արձակուած գնդակներուն:

Եդեսիոյ մէջ (Ուրֆա). Խարբերդէն, Սեբաստիայէն և այդ շրջաններէն տեղահան եղած հայերէն մաս մը, կին և երեխայ, լեցուցած էին տեղոյն կառապանների մեծ խանին մէջ: Քաղաքներու մէջ զգոյշ էին և չէին կարող շատ սանձարձակ կերպով վարուիլ արքայազաններուն հետ, բայց Եդեսիայի թիւրք հարուստները կը պայմանաւորուէին ժանտարմաներու հետ և գիշերանց մտնելով խանը, կարթոնցնէին կիները ու աղջիկները և ընտրելով ամենէն գեղեցիկները, կը տանէին:

Կացութիւնը անտանելի էր այս թշուառներուն համար. ապրելու դժուարութիւնները այնքան բուռն էին, որ մայրեր հարկադրուած էին սուկայի ընտրութիւն մը ընել. այն է՝ իրենց զաւակներուն մէկ մասը փրկելու համար ծախել մնացեալը:

Ուրֆայի ամենօրեայ շուկան դարձած էր մանուկներու պագար. ամենէն գեղեցիկ տղան կը ծախուէր 10 դրուշի:

Արաբ Բունար. Տրապիզոնէն, Սամսոնէն, Պաֆրայէն, Սեբաստիայէն և Ամասիէն տեղահան եղած ժողովուրդներու ողորմելի մնացորդներ էին, որ կը հասնէին Արաբ Բունար: Ասոնք ամիսներէ ի վեր երկար և մանուածապատ ճամբաներէ հետիոտն, բոկոտն, անօթի թափառելէ ետքը կը հասնէին՝ հագուստներնին պատառոտած, ոտքերնին արիւնած, որովհետև կօշիկ չէր մնացած այլ ևս: Արաբ

Բունարի մէջ հայ վաճառականներէ գրաւուած ցորենը թափուած՝ անտէր կը մնար. աքտրեալները սովալլուկ վիճակի մէջ անյագաբար կիյնային վրան և հողով, քարով խառն կուլ կու տային այդ ցորենը անասուններու նման: Յորեն ուտողները հազիւ կապրէին 20 – 24 ժամ և փորերնին ուռելով, կը մեռնէին սարսափելի ցաւերով և գալարումներով: Կառավարութիւնը փոխանակ արգելելու՝ նոր եկող խումբերուն ցոյց կու տար թափուած ցորենը, երբ ժողովուրդը հաց կադաղակէր:

Տեղահան ժողովուրդին վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաներուն անգթութիւնը և հնարամտութիւնը՝ խեղճերը չարչարելով սպաննելու, ամեն մարդկային երևակայութենէ դուրս է: Ասոնք ընդհանրապէս ընտրուած էին Եդեսիոյ, Պերէճիքի, Սամսադի շրջաններու զազանաբարոյ թիրքերէ և քիւրդերէ: Զինուորութենէ փախած ըլլալով, կը զբաղէին աւազակութեամբ և ենթարկուած էին կառավարութեան հետապնդումներուն, բայց երբ հայկական հալածանքները պիտի կազմակերպուէր, կառավարութիւնը յայտարարեց, որ ամեն անոնք, որ յանձնուին, ժանտարմա կարճանագրուին և պաշտօն ստանալով երկրին ներսերը, զերծ կըլլան պատերազմի դաշտ երթալէ: Այս փախստականները փութացին օգտուիլ, և այս անգուսպ վայրենիներուն է, որ յանձնուեցաւ տեղահան եղած ժողովուրդը. ժանտարմաներու վրայ տասնապետ կարգուած էին համիդեան ռեժիմէն մնացած տասնապետներ:

Տեղահան եղած ժողովուրդը բնաջնջման դատապարտուած ըլլալու, անոնք բռնորովին անպաշտպան յանձնուած էին այս մարդակերպներու դիւային չարագործութեանց. լիազօրութիւն ունէին իրենց ոճրագործ երևակայութեան քմահաճոյքներուն համեմատ մահուան եղանակներ ընտրել իրենց յանձնուած զոհերուն համար. այդ է պատճառը, որ անսանձ և անարգել կերկարէին անոնց հոգեվարքը, կենթարկէին զանոնք հոգեկան և ֆիզիքական բոլոր անպատմելի չարչարանքներուն, կերկարէին աքտրեալներու տաժանելի ճամբորդութիւնը, կը բաժնէին սիրելիները իրարմէ, անօթի և ծարաւ պահելէ ետքը երկար ատեն՝ կուտային անոնց այնպիսի ուտելիքներ, որ փոխանակ սնուցանելու՝ տանջանքներով մահուան կենթարկէին զանոնք, և իրենց չարաբաստիկ հեղինակութիւնը ի գործ կը դնէին յառաջ բերելու համար այնպիսի տառապանք, որ ամենէն դիւային երևակայութիւնն իսկ անգօր է պատկերացնելու:

Երբ այս ամեն կողմերէ հաւաքուած ժողովրդէն խումբ մը որոշէին դրկել Եփրատի եզրերը, այնպէս կը կարգադրէին, որ ոչ միայն նոյն քաղաքացիները և գիւղացիները բաժնուին իրարմէ, այլ և ընտանիքները լուծուին: Կառնէին իւրաքանչիւր քաղաքէ կամ գիւղէ տասնական հոգի: Հինգ շունչէ բաղկացած ընտանիքի մը 2 անդամը կը մնար մէկ խումբին մէջ, 2-ը՝ ուրիշ խումբ և մէկը առանձին և այսպէս յաջորդաբար: Երբ սիրելիները իրարու գրկուած՝ չէին ուզեր բաժնուիլ, կու

լային, կողբային, ժանտարմաները առանց պահ մը յուզուելու՝ վայրենօրէն կը բաժնէին զանոնք իրարմէ:

Ծերուկ կին մը, որուն հրամայուած էր առանձին մեկնիլ խումբի մը հետ, կը յաջողի անհետանալ և կերթայ իր հարսը և աղջիկը փնտռելու, որպէսզի միացած գտնուին: Կէս գիշերին պառաւին դիակը ինկած էր հարսին և աղջիկանը միջև. աղջիկը մերկ էր և արինաթաթախ, իսկ յի հարսին փոքր պատռած էին և աղիքները դուրս թափուած, բայց անհկա տակաւին կենդանի էր, և հոգեվարքը տնեց երկար ժամեր առանց որ ոնէ օգնութիւն ըլլայ իրեն:

Կեսարացի մեքենավար մը կը պատմէր, թէ խարբերոցի հարուստ հարս մը յաջողեր էր փախչիլ Սուրուճի քիւրդ հարուստ պէյի մը ձեռքէն և պահուած մնացեր էր երեք օր քարերու մէջ. չի կարողանալով ոնիցէ կերպով ազատիլ և անցնիլ դէպի Հալէպ, ինքզինքը կը նետէ գնացքի մեքենային տակ:

Մեքենավարները, որ ընդհանրապէս քրիստոնէայ սուրիացի և յոյն կաթոլիկներ էին, կը հաւաքէին անօթի և անտէր մանուկներ, որոնք հանքածուխի տեքոյին մէջ պահելով, կը բերէին Հալէպ: Խեղճ փոքրիկները անմիջապէս կը հասկնային, որ ասոնք ազատարարներ են և անտրտունջ կը հետնէին և ոնէ շշուկ չէին հաներ իրենց ներկայութիւնը չի մատնելու համար:

---

«Գործ», 1917, -2, փետրվար, էջ 79–124: